

Hentchak :

Organe Central
DU PARTI

S.-D. HENTCHAKISTE

Հ Ն Չ Ա Կ

Journal Arménien
mensuel
XXVI Année
Adresse Télégraphique :
Հեռագրի հասցե բոլոր
երկրների համար
"HENTCHAK" Paris

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ Ս.-Գ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀԻՆ ՈՒՂԻՆՆԵՐ, ՆՈՐ ՈՒՂԻՆՆԵՐ

Ո՞րն է, ի՞նչն է Հին Ուղին. ո՞րը, ի՞նչը՝ Նորը :
Այդ հարցին կտրուկ կերպով պատասխանելը եթէ
ո՛չ անկարելի, գեթ շատ դժուար է :

Թիւրքիոյ իրականութիւնը, այն փոթորկալից
կեանքը, որ նա է ապրել՝ չի գալիս որոշ կերպով ա-
սելու թէ այդ երկրի մէջ Հին և Նորի տարբերութիւնը
ինչի՞ մէջն է կայացել, ինչոր վերաբերում է նուաճ-
ւող ժողովրդների պատուութեան Խնդիրներին և Պե-
տութեան հիմունքների փոփոխութեանը :

Հին էր, երբ հպատակ ժողովրդների հետ
այլապէս չէին վարում, քան ետթաղանի բանականու-
թեամբ. երբ ենթարկւողները, իրերի բնական բեր-
ժուցով, ուրիշ և ո՛չ մի հնարաւորութիւն էին գտնում
իրենց ձայնը լսեցնելու, իրենց իրաւունքները ընդունել
տալու, քան ապստամբութիւնը, ընդվզումը, շարժումը :

Հին էր նա՛ն ալ, որ եւրոպական պետութիւն-
ներից ոմանք, իրենց սեպհական շահերից զրդուած,
երբեմն միջամտում էին, զոհերի անունով, և Թիւր-
քիայի անդամատութիւնը, քայքայումը, կործանումը
առաջ բերում. երբեմն էլ Տիրողի կողմը բռնում,
նրա գոյութեան շարունակութիւնը տեսնել փափագում՝
զանազան եսասիրական հեռաւոր նպատակների տե-
սակէտով :

Այո՛, զրանք բոլորը Հին էին, շա՛տ Հին, բայց
երեք հարիւր տարուայ պատմութեան մէջ անընդհատ
կրկնուող ն ո Ր Ո Ւ Թ Ի ւ ն ն է ր է չէին :

Հարցն է՝ թէ այդ Հին ուղիները, այդ Հին
ձևերը, դիպում Բաղաքական Խնդիրները վճռելու
Հին մեթոտները ե՞րբ են դադարել. Ն ո Ր Ը չը լի-
նելուց, — պատմութեան ո՞ր շրջանի, ո՞ր մասնաւոր
իրողութեան հանդէպ. և ո՛չ մի : Նրանք նո՛յնքան
Հին, նո՛յնքան Նոր են եղել, որքան որ Թիւրքիան իր
գոյութիւնը, այսպէս թէ այնպէս, մինչև ցարդ շարու-
նակել է :

Երբեմն կային Յունական, Սերբիական, Ռուսա-

նական, Բուլղարական Խնդիրներ. քաղաքակրթական
մի ա՛յլ միջոցներով զրանք լուծուեցի՞ն, քան զէնքի և
արեան : Բայց այդ Հինը երևան չեկա՞ւ, նա
դարձեալ ձեռք չառնուեցա՞ւ այսօրուայ Մակեդոնական,
Կրետական Խնդիրների նկատմամբ : Այդտեղ մալա-
չափ անգամ Հինը Ն ո Ր լինելուց դադարե՞ց, իր
ամենափոքր երանգաւորումների մէջ ի՛սկ :

Անշուշտ կարելի էր, հն ա ր աւ ո Ր էր, Խըն-
դիրների վրայ բնադանցօրէն նայելով, այդ բոլորը ու-
րիշ միջոցներով, ուրիշ սկզբունքներով էլ վճռել. բայց
երբ իրականութեան մէջ այդ կարելին անկարելի եղաւ,
— թէև աշխատողներ, փորձեր անպակաս եղան —
նա մնաց անմարմին, լոկ բնադանցական հայեցողութիւն
ու նրա տեղը բռնեց թանձրացեալ եղել ու թ իւ ն ը՝
իր բոլոր պարագաներով, ասել է՝ թէ ա՛յլ վազերի,
ա՛յլ մթնոլորտների, ա՛յլ շրջանների, ուրի՛շ ազգերի,
ուրի՛շ պետութիւնների մէջ կ ա ր ե լ ի ն ա ն կա-
ր ե լ ի էր Թիւրքիայի համար, որովհետև նա ուրիշ
ազգակներ չէր արտադրել, քան այն՝ ինչոր եղաւ,
կատարուեցաւ, եղելութեան կարգն անցաւ. դա կնշա-
նակի՝ որ Թիւրքիայի մէջ իրերի բնաւորութիւնը, նրանց
ուղղութիւնը բոլորովին ա՛յլ կերպ են դասաւորուած :

Հէնց այն հանգամանքը, այն դառն իրականու-
թիւնը, որ Թիւրքիան այսօր պատերազմի է բռնուել
Բալքանեան Դաշնակիցների հետ, — դա ինքնին գալիս
է ջախջախիչ կերպով փաստելու, որ Օսմանեան Պե-
տութեան մէջ ամբարուած Բաղաքական Խնդիրները
վճռուած են միմիայն ա՛յն մեթոտներով, որ դարևոր
հն ու թ իւ ն ունենալով հանդերձ, երբեք չեն դա-
դարում ն ո Ր Ո Ւ Թ Իւ ն լինելուց : Այդ երկրում
Հինն ու Ն ո Ր Ը կենսունակութիւն ունեցող
նոյնութիւններ են՝ դժբախտաբար :

Տեղի ունեցաւ « յ ե դ ա փ ո խ ո Ւ Թ Իւ ն » —
թող լինի զինուորական — տիրեց « սահմանադրութիւն »
— թող լինի միտհատեան, — պարլամենտարիզմի, ժո-
ղովրդական միահեծանութեան, « Ազգային գերիշխա-
նութեան » անունով խօսուեց, ճառեր արտասանուեց,
պաշտօնական յայտարարութիւններ իս՛կ եղան, և սա-

կան երբ հարցը եկաւ ձօնեմալու ամենապարզ Խնդիրներին, երբ հրապարակ դրուեց օրակարգից երբէք չը վերցուած Կրեւտական, Մակեդոնական, Հայկական, Սիւրիական, Արաբական . . . Խնդիրները ու խօսքը գործի պիտի փոխուէր, — դարձեալ նոյն Հին մտայնութիւնը, նոյն Հին ուղիների կիրառութիւնը, նոյն Հնաւանդ միտումների թագաւորումը՝ ինչոր էր Համիդի օրօք և դարեր առաջ: —

Այդ իրողութիւնը չի՞ գայիս ասելու, որ Թիւրքիայի Աեկաւարիչ Դասակարգը, Պետական Սիւնները շարունակուած են մնալ նոյնը, ինչոր էին շա՛տ առաջ և որ՝ դեռ ընկերային, դասակարգային փոխարարութիւնների բնաւորութիւնը, էութիւնը Հինաւուրցն է:

Պատմութիւնը, ժամանակակից քաղաքակրթութիւնը ասում է, որ այդպիսի Խնդիրներ կարելի էր վճռել առանց ներքին խռովութիւնների, ապստամբութիւնների տեղի տալու և՛ դրանց պատճառով արտաքին պատերազմի դուռ բանալու, բայց քանի որ այլ կարելի չէր Թիւրքիայի Համար, ա՛նքան փորձերից յետոյ, անկարելիութիւններ դարձան, ասել է թէ նրա մէջ արձատա պէս փտած մի բան կայ, որի առաջը առնել այլևս անհնար է, ճարդկային ի՛նչքան էլ բարեացակամութիւն դրուելու լինի: Երէկը կրկնուեց այսօրուայ Համար: Գալիս է վաղը:

Արդ, պատմական ո՞ր տուեալը, ո՞ր երաշխիքը պիտի գայ մեզ Համոզելու, որ առկախ մնացած Խնդիրների Համար՝ ա՛յլ ուղղութիւն, ա՛յլ մեթոտ ձեռք պիտի առնուի, քան ինչոր եղել է մինչև ցարդ:

Հայկական, Սիւրիական, Արաբական Խնդիրները նոյնքան Հին են, որքան էին Կրեւտականը, Մակեդոնականը. — ո՞ր Հիմունքներից առաջնորդուելով պէտք է լաւատես եզրակացութիւնների Հասնել՝ թէ՛ դրանք վճռուելու Համար բոլորովին նոր գործելակերպեր կը բերուին, գործելակերպեր՝ որ իրացնէ նոր լինէին՝ քաղաքակրթական, եւրոպական: Մինչդեռ այս վերջին չորս—Հինգ տարուայ ընթացքումն ո՛չ միայն այդ Խնդիրները առկախ մնացին, այլ տիրող տրամադրութիւնը անսքող կերպով ամէն անգամ ցոյց տուեց, որ նրանք էլ, ի Հարկին, պիտի վճռուեն թրքական մեթոտն երով՝ արեան և եաթաղանի ճանապարհով:

Կարելի՞ է ընկնող պետութիւնների կործանման առաջն առնել՝ ցանկութիւններ, փափագներ արտայայտելով. դարեր դարերի վկայ են, որ քաջքայտող պետութիւնները միշտ էլ ունեցել են իրենց ազդարարները, իրենց բժիշկները, որոնք շարունակ մասնանիշել են տիրող վտանգը և ցոյց տուել փրկու-

թեան ուղին, ընթանալիք գիծը, միջոցը. — բայց դրանք՝ որքան էլ դեղեցիկ տեսականի մէջ, բոլորն էլ ապարդիւն են անցել, բարերար ո՛չ մի Հետեանք են յառաջացրել, երբ պետական տիրող տարրը կ'ոճողացել է, ընդունակութիւնը կորցրել, անդօրութեան մէջ է ընկել և որպէս այդպիսին՝ իր գոյութիւնը միայն քաշքշել է կողմնակի միջոցներով, ջանալով միայն արգելք լինել գալիքին, այն կենսաբեր նորին, որի սաղմերը արդէն ծրել, ընձիւղել են սկսել՝ Հինի փլատակների միջից:

Եթէ խնդիրը քարոզներին, ազդարարութիւններին մնացած լինէր՝ Ատրական, Բաբելական, Բիւզանդական, Հռովմէական, Հայկական, Լեհական . . . պետութիւնները կործանուած չը պիտի լինէին:

Պետութիւնը օրգանիզմ է, երբ մի անգամ փտել է, նրան այլևս բուժել, վերականգնել չի կարելի: Մարդկային միայն մի Հնարաւորութիւն կայ, այն է՝ փտած, պրտաբոցձ, աւերող, կոճղացած դասակարգի արձատաքի գահավիժումը և նոր, կենսունակ, ա՛յլ դասակարգի նրա տեղ անցնիլը՝ պետութիւնը բոլորովին նոր Հիմունքների վրայ դնելու միտակցով: — Բայց թուրք պետական կեանքը այդպիսի դասակարգ յառաջացնելու ընդունակութիւնը չունեցաւ մինչև ցարդ, սրանից յետոյ, արագ կերպով՝ նրա երեւան գալը խնդրական է, տիրելը անհաւանական, մինչդեռ իրերը արագ ընթացքով յառաջ են գնում և ճարդկանց կամքին չեն սպասում: —

Կարելի՞ է Թիւրքիան շրջապատող զօրեղ և կենսունակ պետութիւնների յառաջխաղացման առաջն առնել. Հնա՞ր է եւրոպական կապիտալիզմի մոլեգին ուղիի ընթացքը կտրել. միջոց կա՞յ եւրոպական խընամակալութեան բերած պարտքերից նրան շուտով ազատել. բաղկացուցիչ ազգութիւնների դարգացումը եաթաղանով կասեցնելու քաղաքականութիւնը կը թողնուի՞, — ո՛չ. և ո՛չ մի գրաւական էլ չկայ ասելու, որ եղածը նոյնութեամբ չի շարունակուել: — Երբ այդպէս, և ամէն բան ասում է որ այդ այդպէս է, այն ժամանակ խնդիրը փակուած պիտի Համարել, — Թիւրքիան՝ ներկայ պայմանների մէջ՝ իր գոյութիւնը չի կարող շարունակել, նա Ասիայումն էլ կընկնի, ինչպէս որ եւրոպացում, Աֆրիկայում եղաւ. ինչպէս որ ընկան Ասիական և Աֆրիկեան մահճեղական բոլոր տիրապետութիւնները՝ մեր օրերի մէջ: — Այդ է եղել վախճանը բոլոր այն տէրութիւնների, երբ իրենց փրկութեան, գօրեղացման, գոյութեան միջոցը իրենց բաղկացուցիչ ժողովրդների, եւրոպական քաղաքակրթութեան և յառաջադիմութեան մէջ չեն փնտռել ու պետական ժամանակակից Հիմունքներ չեն ստեղծել:

Թիւրքիան իր գոյութիւնը Ասիայում մի առ ժամանակ, բայց, կարող է քաջքշել, արտաքին ազդակների շնորհով, բայց դա վերջնական փրկութեան ուղի չէ:

Թուրք տիրող «Ազգայնական Կուսակցութիւնը» ո՛չ միայն նորութիւն չը բերեց, այլ պետութեան անկումը աւելի մեծ չափով արագացրեց, — և վաղուան էլ տէրն է նա: Երբ մտածմունքի, բանականութեան տեղ սուրը՝ կաթաղանն է խօսում, — գործերը ա՛յլ կերպ ընթանալ չեն կարող:

Ու գալիս է Հայկական Խնդիրը, Հին ու Նոր մեթոտների նոյնութեան մէջ:

Ի՞նչ պիտի անել:

Անշուշտ՝ մեզ աւելի քան ցանկալի էր, որ Թիւրքիայի եւ րոպակա ն ա ց ու մ ը տեղի ունենար, որ նա Նոր տէրութիւն դառնար, որով և մեր Խնդիրն էլ վճռուէր ք ա ղ ա ք ա կ ր թ ա պ է ս. բայց քանի որ դա ա ն կ ա ր է ի ու թ է ա ն աւաջ է կեցած, քանի որ տիրող նշանները պարզորոշ կերպով ցոյց են տալիս, որ երկրնորանքի Հարցը վերջացած է, — այն ժամանակ զիրք պիտի բռնել, և՛ որոշակի զիրք:

Քանի որ Թիւրքիայի մէջ Հին, Նոր տարբերութիւն չունի, մենք էլ իրերի բնութիւնից դուրս գալ չենք կարող. մենք էլ Հարկադրուած, բռնադատուած ենք, մեզ փրկելու համար, ուրիշ ճանապարհ չը բռնել, քան այն Հինը, որ պատմական է, որ յաւիտենականացէս ն ո ր է. — դա ճնշուող, տառապող, իրենց վիճակը օրինապէս փոխելու անկարող, իրենց ձայնը՝ բողոքը խաղաղօրէն լսեցնելու հնարաւորութիւն չունեցող ազգերին վերապահուած, նուիրագործուած ա՛յն ի ր աւ ու ն ք ը, ա՛յն գ ո ր ծ ե լ ա կ ե ր պ ն է, որ կոչուում է յ ե ղ ա փ ո լ ւ թ իւ ն:

Դա էլ Հին է, շա՛տ Հին, բայց և Նոր, ա ն հ ր ա ժ ե շ ա ու թ իւ ն ի ց ք ղ խ ա ծ Ն ո ր:

Այնտեղ, ուր Հին ու Նոր միութիւն են կազմում, — պատասխանը նոյնանման պիտի լինի, որպէսզի ի ր ե ր ի բ ն աւ ո ր ու թ է ա ն ը հ աւ ա պ ա տ ա ս խ ա ն ի և այդպիսով ը ն դ հ աւ ու ր ն ե ր դ ա շ ն ա կ ու թ իւ ն ը յ ա ու ա ջ ա ն ա ք:

Այս օրերում, երբ պատմութիւնը իր գեղեցիկ էջերը բացած՝ անողոք վրէժ է լուծում ինքն իր ձեռքով, և կատարում է անխուսափելին, — այդպիսի վայրկեաններում Հ ն ի և Ն ո ր ի զուգակշիռը շարունակ ձեռքին պիտի ունենայ և ըստ այնմ քայլել:

ՓԱՍՏԵՐ ԵՒ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

I

Թուրք պետականները, ճանաչող «երկատարը» հրապարակախօսները, մի առանձին սովորութիւն են դարձրել փրոււոցը բառերով աջ ու ձախ յայտարարելու թէ տիրապետող, աշխարհակալող ո՛չ մի ազգ ա՛յնքան հ ա մ ք ե ր աւա ր չի եղել, ա՛յնքան մեծահոգութիւն ցոյց չի տուել ղէպի նուաճուող, տիրապետող ազգերը, որքան Օսմանցիները: Ինչո՞վ բացատրել պատմական այն երևոյթը, որ Թիւրքիայի մէջ՝ բաղկացուցիչ ազգութիւնները չէ թէ միայն իրենց գոյութիւնն են պահել՝ այլ միշտ էլ կենսունակութիւն ունեցել: Դա հեռահեռ է եղել այն հանգամանքին, յայտարարում են օսմանեան քաղաքական առաքինութիւնների պաշտպանները, որ Օսմանցիները, և առանձնապէս նրանց Վեհապետները, պետակցաբար, կամովին թոյլ են տուել, որ ենթակայ ազգութիւնները պահեն իրենց լեզուն, կրօնը, սովորութիւնները, իրենց առանձնայատկութիւնները բնորոշող բոլոր պայմանները, — մի խօսքով՝ նրանք յարգել են հ ա մ ա ա կ ազգերի պատմաւանհատական գոյութեան իրաւունքը: Այնպէս որ, օսմանեան վեհապետները և Թիւրքիայում դարբերի ընթացքում իշխող դասակարգի օրէնսդիր, գործադիր, արդարադատական իշխանութիւնները աւելի՛ ա ղ ա տ ա մ ի ա, լ ա յ ն ա ի ո հ են եղած, աւերացնում են փաստողները, քան քրիստոնէայ պետութիւնները, որոնք կատարի կերպով աշխատել են հարուածել իրենց տիրապետութեան տակ գտնուող բազալորոշ տարրերի ինքնագոյութեան պայմանները: Ուրեմն՝ Օսմանցիները արել են այն՝ ինչոր չեն կատարել քաղաքակիրթ կաշուած եւրոպական պետութիւններից շատերը. — քանի որ այդպէս, եզրակացնում են մեր պատմագետները, ասել է թէ օսմանեան ղեկավարիչ շրջանները ճանաչող յարգանք, առանձին վարկ պիտի վայելեն, երբ ինդիւրը վերաբերում է օսմանեան պետութեան մէջ բովանդակուող ազգութիւնների քաղաքական յարաբերութիւնների ճշգրտուն:

Դրանով ի՞նչ են ուզում հասկացնել այդ տեսակի փաստողները, — այն՝ որ ա ն ա ր դ ա ր են գանգատուող ազգերը: Հեռահեռ՝ օսմանեան պետութեան մէջ ծագած ազգային գոյն առնող քաղաքական բոլոր խնդիրները ո՛չ այլ ինչ են, եթէ ո՛չ անմիջական արդիւնք ն ե ր ք ի ն և ա ր ա ա ք ի ն խարդաւանանքների:

Դա մի առաւստակ է, աւելին՝ առաւստակների առաւստակը: Բաւական է մի հարեւանցի ակնարկ ձգել օսմանեան պետութեան դարգացման շրջանի վրան, սկզբից մինչև մեր օրերը, անխախտ համոզում գոյացնելու համար որ՝ արդարև, դա առաւստակների առաւստակն է, որ բոլորում է արեւելեան աճեն ինչ աղճատող երևակայութիւնից: Այստեղ՝ պատմութիւնը, իրողութիւնները ո՛չ միայն սխալ են պարզաբանուած, այլ ազաւաղում, խեղաթիւրում ամենամարտիկիդ՝ կերպով՝ զանազան գծում նպատակների հասնելու համար:

Ու մենք էլ, պատմական անհերքելի փաստերը մեր ձեռքին, ասում ենք, — աշխարհակալող ո՛չ մի ազգ ա՛յնքան վայրագ կերպով աշխատանք չի թափել ենթակայ ազգութիւններին քայքայելու, կործանելու, բնաջնջելու, բռնի ոյժով ա-

պղծագոյնացիներու, կրաներու՝ որքան օսմանցի իշխողները Այդ տեսակէտով թուրք աշխարհակալները եղած են աւելի քան անողորմ, անհամբերող, փոքրողի՝ ծայր սաստիճան: Բաղկացուցիչ ազգութիւնների երակներից ծորող ի՛նչքան լայնածիր լճեր կան տարածուած օսմանեան պետութեան մէջ, օսմանեան պատմութիւնը արիւնի մի հսկայ շաղախ է: — Հին Ասորեստանի, Բաբելոնացի գահակալները հազիւ թէ նախանձէին իրենց օսմանցի յաջորդների “արեան փառք”-ին: Նրանք պարծեցել են նուաճողների գանգերից կազմած բուրգերով. բայց այդպիսի հարիւրաւոր բուրգեր օսմանեան պետութեան սր անկիւնի մէջ չի կառուցուել դարեր շարունակ: Կարպատեան լեռնաշղթայից մինչև Հայկական Պար, Օսմանի Ծովից մինչև Ադրիականը տարածուող երկրների ընդարձակութեան մէջ կատարուող ազգասպան ձեւարկների, թափուած արիւնների համառօտ ցուցակն անգամ հերիք է՝ ցոյց տալու համար օսմանեան համբերատարութեան, մեծահոգութեան, առասպելի աշխարհակալութիւնը: Հայ, Յոյն, Բուլղար, Սերբ, Ռուսներ, Մաճառ պատմութիւնների մարտիրոսագրական էջերը անանց վիայ են հաստատելու համար թէ պարտուող այդ ազգերը ի՛նչ ճիւղաղային տառապանքների, ի՛նչ անլուր հալածանքների են ենթարկուել իրենց գոյութիւնը պահելու համար: — Թիւրքիան դասական երկիր է եղած հակամարդկային արարքների՝ ինչոր վերաբերում է հպատակ ազգերի կեանքի, ինչքի, պատուց գործին, և դա կանխորոշմամբ, գիտակցաբար: Օսմանեան աշխարհակալները ո՛չ թէ ճշակոյթի, քաղաքակրթութեան, խաղաղ միջոցներով են աշխատել ձուլել, տիրողի մէջ հալել աշխարհակալութեան զոհերին, այլ ստիպական բռնութեան, ետթաղանի ճատարհով: Եթէ միջնադարեան Իսպանիան ունեցել է իր մէկ հատ Փիլիպպոս Բ-ը, օսմանեան տիրապետողները այդպիսի տանտակներ են արտադրել, և միայն այդքան չէ, նրանք Փիլիպպոս Բ-ի քաղաքականութիւնը՝ աշխարհակալուող ազգերի վերաբերմամբ՝ մնացուց, յարատեւ իրողութիւնների կարգն են անցրել:

Օսմանեան համբերատարութեան, մեծահոգութեան ստորոգելիները մատնանիշողները մեղմաբանում են թէ մահմեդական կրօնի պատուէրներից մէկն է՝ ոչ-մահմեդականներին որպէս “աւանդ” նկատել: Երբ քաղաքական, տնտեսական, ընկերային յարաբերութիւնների արտայայտութիւնը “աւանդ” եզրով է բնորոշուած, — դա արդէն ինքնին ամէն բան վճռում է. որովհետեւ “աւանդ”ը պահելու պատճառը, ցանկութիւնը, նրա ապահովութեան պայմանները միշտ կախումն կունենայ աւանդապահի բացարձակ կամքից: Իսկ այդ կամքը թելադրում է “աւանդ”-ի հետ վարուել ինքնիշխանօրէն, առանց ունեւ հակակշիռի, այնպէս՝ ինչպէս որ թոյլ են տալիս իր սեպհական տնտեսական, քաղաքական, ընկերային շահերը, որ հակամարտութեան հիմունքների վրայ են դրուած՝ նուաճողի և նուաճուողի փոխ յարաբերութիւնները սկսելու առաջին օրից:

Վիճաբանութիւնները մի անգամ ընդ միշտ փակելու, որոշեալ երկրակցութեան հասնելու համար՝ դիմեցէ՛ք պատմութեան, քրքրեցէ՛ք կատարուած իրողութիւնները, յաւա՛ջ քաշեցէ՛ք, խօսեցրէ՛ք դրանց:

Պատահել է ժամանակ, որ եկեղեցիներ, վանքեր չը յա-

վրշտակունեն և նրանց գոյքերը, կայքերը չը սեպհականացուեն: Եղել է մի օր, որ կրօնական հարածանքը իր ուժգնութեամբը գործած չը լինի. բռնի կրօնափոխութիւնները երբ են դադար առել: Առևանգումները, իր բոլոր տեսակներով, վերջ ունեցել են: Հայ, Յոյն, Բուլղար, Սերբ, Ալբան . . . ազգերի պատմութիւնները այդ մասին սարսուռ ցուցիչ իրողութիւններ ունեն արձանագրած՝ հազարաւոր օրինակներով: Կարո՞ղ է օսմանեան կրօնական համբերատարութեան մասին՝ ամենափոքր չքմեղանք անգամ արտասանուիլ: — Երբէք: Այդ կողմից նա արդէն դատապարտուած է:

Հասկանալի է. մշակութապէս բարձր մի ազգ կարող է ստորադասեալին հարկադրել, խաղաղ միջոցներով, իր լեզուն, իր մասնայատուկ պայմանները ճոռանալ, կորցնել: Բայց մյ՛ջ կերպով պիտի բացատրուի հարիւր հազարաւորների, միլիոնաւորների ի՛սկ, իրենց մայրենի լեզուն կորցնելու երևոյթը. ոչ-թուրքերէն խօսողների լեզուն կը տրեւը, մայրենի լեզուով արտայայտուելու բացայայտ արգելք՝ օսմանեան պետութեան կազմակերպութեան մէջ՝ իր որոշ դերը չի՞ ունեցել: — Կարելի՞ է ուրանալ, արդարանալու հնարաւորութիւն կա՞ր: — Բնաւ:

Յարգուել է տիրուողների վարք ու բարքը, սովորութիւնները !! — Սա առասպել չէ՞ այն իրողութեան հանդէպ, երբ նուաճողների զգեստներն անգամ ստիպել են փոխել և տիրողի տարազը վրան աւնել: — Թուրք պետութեան սր խորշը այդ մասին ջախջախիչ վկայութիւն չի բերիլ:

Օսմանեան պատմութիւնը իր “փառաւոր” էջերից շատ բան պիտի ջնջի՝ համբերատարութեան, մեծահոգութեան խօսք անելու համար: Իրողութիւնները կարելի է խեղաթիւրել, բայց ո՛չ ուրանալ:

Ուրիշ բան չէ, եթէ միայն Միսհաֆեան “Սահմանադրութեան” այս չորս տարուայ շրջանի մէջ կատարուած իրողութիւնները առնենք, կը տեսնենք, որ “հայերի” արածները ուղիղ կերպով շարունակել են “որդիները”: Իսկ այդ շրջանի մէջ եղածները ա՛յնքան թարմ, ա՛յնքան ցայտուն են, որ ամէն անկողմնալ ոգու բացականչել կը տայ թէ՛ արդարև համբերատարութիւնը, մեծահոգութիւնը բոլորովին բացակայ է եղել օսմանեան տիրապետողների ուղեղից: — Նրանք ջանք չեն խնայել շիփ շիտակ, ամէն հնարիմացութիւններով, առանց խտիր դնելու երանգաւորութեան մէջ, բնաջնջելու, ձուլելու՝ ետթաղանով տիրապետուող ազգութիւններին, որպէս վերջնական իրաւունք՝ իրենց գոյութիւնը ապահովելու, մշտնջենաւորելու համար: — Կոյր պէտք է լինել, պատմական այդ իրողութիւնը չը տեսնելու համար:

Եթէ տիրապետուող ազգերը կարողացել են իրենց գոյութիւնը պահել, դա եղել է բոլորովին հակառակ տիրողի կամքին և ցանկութիւններին: Նրանց կեանքը պայմանաւորուել է լոկ այն ներոյժ ազդակներով, որ նուաճողը միշտ աշխատել է խորտակել, և սակայն իրականութեան ժայռին բաղխելով՝ անկարող է եղել իր այդ անմիջական նպատակին հասնել, ուստի իր սեպհական ինքնագոյութեան բնազդի տեսակէտից՝ մի որոշ *modus vivendi*-ով հաշտուել է, հարկաւ ժամանակաւորապէս, որ նրանք ապրեն թուլացած, տկարացած՝ արտադրողի կրաւորական պաշտօնի մէջ մտնելով, մինչև որ քայքայուած վերսկսելու ուրիշ յարմար ռոպէներ գան: Եթէ ազգերը իրենց լեզուն, կրօնը, սովորու-

թիւները, բարբ ու վարբը, իրենց պատճառահատուածութիւնը շեշտող պայմանները պահել, դարգացրել են, — դրա գաղտնիքը նոյն այդ ազգերի ներքին կենսունակութեան մէջ պիտի փնտռել և ո՛չ թէ նուաճողի մեծահասակութեան, համբերատարութեան: Մի բուն աշխարհակարգ իր էութեամբ՝ կազմով և կեանքի պայմաններով ճի հսկայ բանակ, — ճանաչանք սկզբներում — ցրուած ճի անհուն տարածութեան վրայ, երբ նրա գոյութեան նիւթական պայմանները գտնուած էին իրենց դուրս, և ճշակութապէս տիրուողներից աւելի ստոր աստիճանի վրայ էր, — ճի հարւածով չէր կարող ոչնչացնել կազմակերպուած այն ազգերին, որոնց մէջքի վրան հեծած ապրում էր: Կեանքը ծայրայեղութիւններ չունի, հակառակ արտայայտուող ցանկութիւններին՝ նա շղթայի օղակներով է առաջ գնում:

Ներկան անցեալի հարազատ յաջորդն է, իր երանգաւորութեամբով ճիւղին:

Այս չորս տարուայ ընթացքում հայը եղաւ սահմանադրական զինուոր: Նա ո՛չ ճիւղն ամենամեղծ վերաբերում ունեցաւ դէպի վերածնունդի թիւրքիան, այլ բարոյական, նիւթական, ֆիզիքական ամէն գոհողութիւն յանձն առաւ, աւելի քան ճի ուրիշը: Վերանորոգուելիք ճի երկրի համար՝ նա ճի հրաշալի ատաղձ ներկայացրեց: Հայ Կուսակցութիւնները, իրենց եռանդազին գործունէութեամբ, կատարեալ կուտուր տրեգերներ, քաղաքակրթական ռահահորդներ հանդիսացան. պետական վերածնունդի տեսակետով՝ նրանք անհամեմատ աւելի արեցին, քան թուրք Կուսակցութիւնները. և ճիւղն այդ չէ, — նրանք անկերպահ հերպով ոչ-հայ ազգերի բոլոր արտադրող, աշխատող դասակարգերի շահերը պաշտպանեցին ու նրանց անկեղծ ուղեցոյցը, առաջնորդը լինելու դրական գործը ձեռք առան: — Բայց այդ բոլորից յետոյ ճի օր անգամ՝ ջարդի, կոտորածի մղձաւանջը դարձրե՞լ է գոյութիւն ունենալուց: Հայերի վրայ յարձակում գործելու իրական ցանկութիւնը երբ և իցէ իր թափը թուլացրել, կորցրե՞լ է: — Երբէք:

Հայը աշխատում, նպաստում, իր բաժին ատաղձն է բերում Պետութիւնը նոր պայմաններով, ժամանակակից հիմունքներով կառուցուելուն, որպէսզի բոլոր ազգերը հաւասար իրաւունքներով ապրել կարողանան. ու իրերի բնական բերմունքով՝ նա կուսի է բունում թիւրքիան դէպի անշեղ կործանում ամառող աւատապետական կարգերի և սրանց մարմնացնող տնտեսի դէմ, — ահա լինում է ցոփակեցութեան ճի ըմբիշ հակիւր փաշայ, որ պաշտօնապէս հեռագրում, հրահանգում, պատուէրներ է տալիս՝ «Հայերի պատճառով Քրդերին չը նեղել»: — Ասե՛նք, որ դատարանը կղերա-բերօրկրատական, աւատաւորութեամբ հիմունքներին և նրանց իդէալները նոյնութեամբ ընդգրկող «Իտտի-հատ»-ի սրտազին բաղձանք է եղել, և է՛, միշտ: Աւելացնե՛նք, որ նոյն այդ հակիւր փաշան էր, որ «Օսմանեան Պարլամէնտ»-ի ամբիւնից յայտարարեց, որպէս սաղրազամ, թէ ինքը՝ «եկել է «Իտտի-հատ»-ի ծրագիրը գործադրելու»: Կոստանդնուպոլսի մէջ նստած 5-600 կղերա-բերօրկրատներ ամբողջ թիւրքիան են ուտում, ճի քանի պաշտօնակից շահակիցներ էլ իրենց շքախմբերով, թո՛ղ նոյն շահագործումը անեն Հայաստանի մէջ, դրանից ի՛նչ վնաս, չէ՛ որ թիւրքիան տիրող դասակարգի կողպուտի ասպարէզն է և ամէն ինչ էլ այդ

հիմունքների վրան է դրուած:

Հայ զինուորը պատերազմի դաշտը գնդակների տեղատարափին է կուրծք տալիս, սակայն Հայաստանի մէջ նրա կինը, քոյրը, մայրը անպատիժ կերպով բռնաբարւում են, իր ստացուածքները յափշտակում, և այդ էլ «հայրենիքի փրկութեան» համար կեանք տուած ժամանակը:

Բացի իր վրայ ծանրացած խաշոր հարկերից՝ Հայը առատաձեռնորէն օգնած է «նաւատորմի» զօրացմանը և, ճանաչուրապէս, ներկայ պատերազմի առթիւ բացուած նուիրատութեանց (իյանէ) և այլն: — Այնտեղ, ուր թուրք ազան, բէկը, փաշան, ունեւորը 1-ով, 5-ով է տուել, Հայը 10-ով, 20-ով է առաջ անցել: Այդ բոլոր զոհաբերութեանց ժամանակ՝ համոյնատարած ջարդի երկիւղը նրա գլխի վրայից ճի օր պակասե՞լ է, տիրող շարունակ իր սուրը չի՞ շուղացրել նրա աչքին:

Առնենք ճի քանի ուրիշ իրողութիւններ էլ:

Այս չորս տարուայ ընթացքում «Իտտի-հատ»-ը, իր տրամադրութեան տակ եղող կառավարական ամբողջ ոյժով, ջանք չի խնայել հայերին տնտեսապէս քայքայելու և երկրի հարստութեան արտադրութիւնը բացառապէս թուրքերի ձեռքն անցնելու:

Բաֆրայի շրջանի ազգաբնակչութիւնը՝ Հայ, Յոյն, Թուրք ըստ մեծի մասին պարապում են ծխախոտի արտադրութեամբ և փոխադրութեամբ: «Իտտի-հատ»-ը բացայայտ հրամաններ է արձակել՝ ամէն հնարաւորութիւն գործ դնել, ծխախոտի ճշակութեան ու փոխադրութեան գործը Հայերի ձեռքից հանել: Խօսքը Բաֆրայի երկու «երեւելի» թուրքերին է, Մահմէդ և Ճէլալ անուններով, որոնց ասածները նոյնութեամբ մէջ ենք բերում, ինչպէս որ արձանագրել ենք:

«Մենք «Սուրբ Կուսակցութեան» ուղարկած բոլոր հրահանգներին գլուխ էինք ծուռ, նրա հրահանգները ընդունում էինք՝ ինչպէս սրբութիւն: Նրա գործիչներին խօսքը մեզ համար պատուիրան էր, որից դուրս գալը մեղք էինք համարում: Այն հաւատքն ունէինք, որ նրանք, որպէս ժողովրդի և պետութեան շահերի նուիրուած մարդիկ, աւելի լաւ կը հասկանային և կը պաշտպանէին մեր սեպհական շահերը, քան մենք ինքներս: Տուած հրահանգներին լսեցինք, խղիցինք մեր յարաբերութիւնները հայերի հետ, կուռեցանք, հալածեցինք նրանց: Մի ամբողջ տարի անցնելուց յետոյ միայն ուշքի եկանք, որովհետեւ ինչքան որ հայերը վնասուեցան, մենք էլ՝ եթէ ոչ աւելին, գէթ նրանցից պակաս չը կորցրինք, ու քիչ մնաց որ տնտեսական կատարեալ կործանումի մատնէինք: Եթէ մենք «Իտտի-հատ»-ի ասածները տառացի կերպով գործադրէինք, մենք կա՛մ հայերին այս երկրից իսպառ պիտի արտաքսէինք, կա՛մ բնաջնջէինք և կամ մուրացկանի վիճակի մէջ դնէինք՝ խլելով նրանց ձեռքից ամէն տեսակի արհեստ, գործ, վաճառականութիւն, կարուած, և այլն» — Պատմուածքը ամէն կասկածից վեր գուտ իրականութիւն է:

Է՛րՊԱԱ: — Այս գաւառաքաղաքի մէջն էլ Հայերը պարապում են ծխախոտի արտադրութեամբ: Խօսողները էրպաացի երկու պարկեշտ թուրքեր են՝ Մուստաֆա և Համդի:

«Մենք տարիներից ի վեր Հայերի հետ ամենատեսութեամբ կապերը յարաբերութիւն ունէինք: Որքան որ մեր մէջ սահմանահատութիւն էր, բայց երբ մեր հարեան Հայը գար և կէս գիշերին ի՛սկ ասէր, որ աղջիկդ, կինդ պիտի

գայ որ արտը երթանք՝ ձի բանի ա տ ճ ա տ (տրցակ) ճը-
խախտ բերենք, — և փոխադարձաբար նոյնը մենք ասէինք
Հայերին — զա կը կատարուէր առանց որ և է կասկածի,
այդ շրջանակի մէջն էր զորում մեր առօրեայ կեանքը:
Մենք հարեւաններ, զրկեցներ էինք, այս բառի բարեկամական
իմաստով: Սուլթան Համիդն անգամ շատ փորձեց մեզ իրա-
բու տալ, բայց անկարող եղաւ: "Իտտիհատ"ը այդ կողմից
յաջողեցաւ մեզ խաբել: Թէ ինչո՞ւ խաբար հարածի սկը-
սեցինք Հայերին, — չը գիտենք թէ այդ ինչպէս եղաւ. բայց
երբ ուշքի եկանք, տեսանք որ երկուսս էլ քայքայուել, ահա-
զին կորուսաներ ենք սուել: — "Հայերին ո՛չ մի կտոր հող,
ո՛չ մի արհեստ, վաճառականական ո՛չ մի ձիւղ թողնել, այդ
բոլորը ձեր ձեռքը պիտի անցնէք", — սա էր Կ ա ու ա վ ա-
ր ու թ ե ա ն բացորոշ հրամանը. իսկ "Իտտիհատ"ի գործիչ
պրօպագանդիստները, Սարճիկից եկած հրահանգները մեր
գլուխն էին ուսեցնում: Խոտովանում ենք մեր սխալը.
բարեբախտաբար արթնցանք:"

Ու պատմողները սրտմտութիւնից, անկեղծ ապաշուան-
քից ուղղակի դողդողում էին:

Ձեր պահանջը գլխաւորապէս ի՞նչ է, հարցում է
ալեգարդ Մարտիրոս աղայից, Նիկասրի մէջ: — "Ու-
չինչ, միայն ա պ ա հ ո վ ու թ իւ ն: Առաւօտը շուկայ,
դաշտ կերթանք, վատահ չենք, որ երեկոյեան ողջ առողջ
կարող ենք սուն վերադառնալ և մեր ընտանիքը անվնաս
գտնել: Տե՛ս՝ գիծացի բլրակները, մի քիչ զաւելւայր երկարող
վարեկահողերը բոլորը մերն էին, մեր պապերից մնացած, մեր
արիւն քրտինքով շաղախուած, կառավարական ամէն օրէնք-
ներով հաստատուած. բայց Այի բէկը գրաւեց՝ առանց մեր
բողոքին, լաց ու կոծին նշանակութիւն տալու: Այս երեք
տարի է, որ դատարան կերթանք, կուզանք, անից անցից ե-
լանք, բայց լսողը, արդարութիւն արողը ո՞վ է: — Ծերունին
արտասաքի հեղեղ էր թափում իր չորցած այտերի վրան:
Դա եզակի երևոյթ էր, այլ ամենօրեայ կեանքի շղթայածի
մէկ փոքրիկ օղակը:

— "Ուրիշ բան չենք ուզիլ, միայն այն՝ որ մեր հայալ
վատասկը մեզ մնայ և մեր ձեռքից չառնեն: Եթէ "Սահմա-
նադրութիւնը" մեզ այդ բանը ապահովէ, մենք շատ շնորհա-
կալ կլինենք: Աշխատածներս վրայ ենք տալիս հերիք չէ, և
ահա տեղական զինուորական հրամանատարն էլ մի օր խա-
նութիւն եկած, ոտք ոտքի վրայ դրած՝ արհամարհանքով ասում
է. "Օլան Կարապետ, հայերդ մեր ք է օ լ ա ն եր ն էք (ստը-
րուկները), որ 15, 20 դուրուշով գնիլ ենք ուրիշներից, ձեր
կեանքը դրանից աւելի չի արժեալ . . . Այն էլ շատ է,
որ մեզ թողնում ենք ապրելու . . ."

Նւ այդ իրողութիւնը պատճառ Սեբաստացի վաճառականը
տալիս էր երկար ցուցակը իր վատասկածի ու ձեռքից
խլուածի: — Թիւրքիայի ո՞ր անկիւնում դա կեանքի կա-
նոնաւոր ընթացքը չէ:

— "Հողային խնդիր, ստուծ էր Կեսարիայում յայտնի բժիշկ
Փիլիսոպոսեանը՝ բայց դա ո՞րտեղ չկայ, հայ ո՞ր գիւղացու,
ո՞ր քաղաքացու կարուածները, անշարժ կայքերը յափշտակ-
ւած չեն՝ աւելի կամ պակաս: Եթէ թուրք կառավարութիւնը
կը համաձայնի Հայաստանին անկախութիւն տալ, Հայերին՝ ա-
զատութիւն, — ապա նա կը ցանկանայ Հայերից գրաւուած
հողերը իրենց իսկական տէրերին վերադարձնել, — ինչոր բա-

ցարձակապէս անկարելի է, չի՛ վնիլ, որովհետև բոլոր գրա-
ւումները կատարուել են հէ՛նց նոյն այդ Կառավարութեան
կանխորոշ անօրէնութեամբ: Տնտեսապէս Հայերին կործանել,
— ահա տիրող պաշտօնական կարգախօսը՝ առաջ և հիմա:
Նւ դա աստիճանաբար գործադրուած է տեղին ու պարագային
համեմատ:"

Առնենք կատարածի մնացուն ուրուականը:
Համիդի գահընկէցութեան պարագաները շահագործելով՝
"Իտտիհատ"ը կատարել տուեց Արմանս: Այդ ճառին կասկած
անգամ չի կարող վնիլ:

Մէկը միւսից աւելի հաղարար փաստեր կան հաստա-
տող, որ "Իտտիհատ"ը, իր "անկման օրերի մէջ", հայկական
ընդհանուր կտորած էր ծրագրել:

Կառավարական շրջանները, պաշտօնէութիւնը ինքը քա-
նիցս սաաց, կրկնեց, որ Հայաստանի մէջ եղած բոլոր ան-
ցուղարձերը, բոլոր սպանութիւնները, քրտական յարձակում-
ները ուղղակի արդիւնք են "Իտտիհատ"ի թելադրութիւններին
և նրա ծրագրային ճառի գործադրութեանը: — Այդ փաստը
վիճաբանութիւն անգամ չի կարող վեր առնել:

Սեբաստիայի շրջանի մէջ յայտնի Մուսամէր բէյն էր,
որ իր գլխին հաւաքած բոլոր ջարդարանները, ծրագրել, հը-
րահրել, ամէն ինչ կաղծ ու պատրաստ վիճակի մէջ էր դրել:
Բոլոր շրջանները իրենց գործադրիչ դերակատարներն
ունէին:

Հայաստանը ընդհանուրի միայն մի օղակը պիտի կազմէր:
Ընդհանուր ազանշանը անցեալ Ա ա Ր ի Փ է ի օրն էր:
Վեղիր-Քէօփրիւի մէջ, Մարզուանից 7-8 ժամ հեռու,
զինուորներին փամփուշտներ անգամ բաժնուած էին. ամէն
ինչ կարգին էր, սպառուած էր հրամանի: — Պատրուակը
պիտի վնիլ, որ Հայերը նախադրած կղան, ճղկթիների վրայ
խուժելով՝ պայթուցիկներ նետելով: Նւ սա ճշգրիտ իրողու-
թիւն է իր բոլոր ճանրամասնութիւնների մէջ: Պատրաստել
էին արդէն երկու թուրք վիճակներ, որոնք նախապէս գայճա-
գամին ներկայանալով հաստատել, արձանագրել էին սուել,
որ իրենց վարպետ կոշկակարը սուել էր՝ Ա ա Ր ի Փ է ի ն ճըղ-
կիթ չերթալ, որովհետև Հայերը ռուճբերով յարձակուած պիտի
գործեն: Իզուր խեղճ վարպետը լալիս, ասում էր, որ ինքը
այդպիսի խօսք երբէք չի ասել: Իտտիհատական գայճագամը
սչինչ պատճառ չէր գտնում՝ չհաւատարու երկու "պատուա-
ւոր միւլիւմանների վկայութեանը":

Նոյնանման կազմակերպութիւններ էին եղած բոլոր վայ-
րերի համար: Յատակապիճը, միտումները, փաստերը ընդհա-
նուր էին:

Բայց թէ ինչո՞ւ տեղի չունեցաւ, — զա բոլորովին տար-
բեր խնդիր է, որ սնի իր յատուկ պատճառները. թէև դա
փաստ էլ չէ, որ ընդհանուր կտորածի հաւանականութիւնը
ճազազտի անգամ պակասած վնիլ:

Մի անգամ ընդ միշտ, որպէս անվիճելի ճշմարտութիւն,
աչքի առաջ պիտի ունենայ հետեւեալը. — երբ ամենափոքր
յ ա Ր մ ա Ր ը ո պ է ն ներկայանայ և համոզուած վնիլ, որ
իր արարմունքը զիւրութեամբ կարող է մարտել, Թուրք Ազ-
գայնականութիւնը, որի ձեռքն է այսօր երկրի կառավարա-
կան գործը, առանց սատանուելու, որպէս պ ա տ մ ա կ ա ն
ա ն հ Ր ա ժ ե շ ա ու թ իւ ն, անխնայ կերպով պիտի կո-
տորի Հայերին: Նւ այս անգամ աւելի անողոք քան 1895

1896-ին, աւելի սաստիկութեամբ՝ քան Ադանայի Եղեռնը: Ջարդի հոգեբանական դրութիւնը մնայուն է և ունի իր խորին արձանները, որ հեշտութեամբ չպիտի կարելի լինի թուրք ազգայնականի պինդ գլխից դուրս քաշելու:

Սա էլ որոշ է, որ թուրք նացիօնալիզմի Հին ու Նոր ներկայացուցիչները ո՛չ ձի կերպ չեն ուզում հաշտուել Հայ ժողովրդի գոյութեան, բարգաւաճման, կենսունակութեան գաղափարի հետ: Նրանց ընդհանուր տաքտիկան է՝ Սահմանադրական՝ պատրանքների մէջ Հայերին օրօրելով՝ քայքայել, ոչնչացնել՝ ճանաւանդ ա ն տ ե ս ա պ է ս, քաղաքականապէս արդէն ո չ ի ն չ չ ս ճ ն ն ա լ ո լ ի:

Սա ժայռ իրականութիւն է, որ պէտք է տեսնել, ճանաչել և ըստ այնմ դիրք բռնել: Իրողութիւնները, կասկածները, ենթադրութիւնները ճշդիւր համար՝ պատմութեան պիտի դիմել, իսկ մեզ այդ անաբօղ ճշմարտութիւնը ասողը՝ ինքը պատմութիւնն է:

Եւ որովհետեւ Թուրքիայի ամբողջ տարածութեան վրայ, ճանաւորապէս Հայաստանում և Կիլիկիայում, թուրք ազգայնական պրօօվօկացիան ուժեղ կերպով գործում է և դարձանաճուտ սպասում յարձակում գործելու՝ առաջին իսկ պատեհ վայրկեանին՝ իր սրտի մէջ ամբարուած թունախառն ժահրը թուրք թափելու, — ոււստի նրա լարած բազմացանց զսպանակները ի դերեւ հանելու համար՝ զգուշացանք անհրաժեշտ է ընդհանրապէս պիտի առնել: Ս՛չ մի պատրուակ չտալու բազմապիսի ճաստուածութիւնը պէտք է ունենալ և դրա հետ զուգընթացաբար կանգնել քաղաքացիական ինքնապաշտպան դիրքի վրայ:

ՊԱՏՐԱՄՈՒՄ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ, — դա է քաղաքացիական գիտակցութեան այն վեհագոյն պարտականութիւնը և ճարդկային էն տարրական իրաւունքը, որ բոլէն բացարձակ, անյետաձգելի, հրամայական անհրաժեշտութիւն է դարձրել՝ ա՛յս և գալիք օրերի համար:

Ասիայում պարփակուող թուրք ազգայնականութիւնը մեզ չպիտի խնայի՝ ո՛չ ձի պայմանի տակ, նրա շողորթութիւնները, սուտակասպտութիւնները, մեղրածորան յայտարարութիւնները բոլորն էլ ժամանակ վաստակելու համար են, բոլորն էլ միջոցներ են միայն մի նպատակի համար, այն է՝ ամէն գնով հայերին մէջտեղից վերցնել, թէկուզ փոքրիկ ցնցումներով, թէկուզ ասիական մի քանի նահանգներ կորցրնելով:

Մի՛շտ մտածենք այդ մասին, բայց երբեք չխօսենք”, — Գամբետտայի այդ խօսքը թուրք ազգայնականի ճշտական՝ սեւեռուն, մղիչ գաղափարն է՝ հայերին կոտորելու, բնաջնջելու նկատմամբ:

Մենք էլ, ուրեմն, այդ մասին շարունակ մտածենք, ժայռ իրականութիւնը աչքից բաց չթողնենք և ըստ այնմ կազմ ու պատրաստ գտնուենք՝ առանց սին բառերի, ցնորական երազների մթնոլորտի մէջ ընկնելու:

“Ինձը իւր խայտուցները չի փոխիլ”. երբ 3-4 հարիւր տարի եւրոպայում, քաղաքակրթութեան շէճքին վրայ ապրող թուրք ազգայնականութիւնը իւր խայտուցներից շերտիկ անգամ չպակասացրեց, և այնտեղ իր սեպհական մեղքերի ճանրութեան տակը թաւալեց՝ մինչև վերջ անուղղայ մնալով

— Ասիայում այդ հրաշքը պիտի կատարուի: Նա այդտեղ էլ կը շարունակի մնալ նո՛յն “գաղանը”, նո՛յն մեթոդներ գործադրողը, ինչոր էր դարեր առաջ: Պատմութեան սուտանները անպատիժ կերպով չի կարելի ուրանար: Մեր արեան ճահիճները ա՛յդքան շուտ չը ճուսնանք:

Ժամանակակից կեանքի պահպանութեան առաջին ազդակը, առանցքն ի՛սկ, սուրբ, զէնքը, հրանիւթն է: Աշխարհի ո՛ր մէկ անկիւնը, պատմութեան ո՛ր էջը որ քրքրէք, — այդ կը տեսնէք: Երբ այդպէս, ապա մենք էլ մեր ինքնապաշտպանութեան, մեր հաւաքական գոյութեան նախապայմանը ամենից առաջ այդ գործոնների վրայ պիտի դնենք, բացառութիւն կազմել չենք կարող: Եւ ո՛րտեղի իրականութիւնը այդ թէզի վրայ կեցած չէ, այս անցողական շրջանի մէջ: Գարունը չի գալիս ո՛չ ցանկութիւններով, ո՛չ էլ քարոզներով, և մենք չենք, որ հակաբնականը բնականի պիտի վերածենք:

Մեր սկիզբը, մեր վախճանը մեր մէջ, բացառապէս մեր մէջ պիտի վնասուենք. — առնականութիւն, կենսունակութիւն, ապրել ուզող ազգերի նշանաբանը դա է՝ փոթորիկների, ճրրիկների այս օրերի մէջ. դա դժբախտութիւն է, բայց հէնց դա էլ այն ժայռ իրականութիւնն է, որ չտեսնող կոյրերի զլուխն է փշրում:

Մի՛շտ աչքի առաջ ունենալ, որ մեր տիրողը ո՛չ միայն մեծահոգի, համբերատար չէ, այլ արիւն ու ուշտու Արթուրն:

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻԻԼԵԱՆ.

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԳԻՐ

Ռուս հասարակական կարծիքը, այս օրերիս մէջ, անտարբեր չէ դէպի այն բոլորը, ինչոր վերաբերում է Հայաստանին և Հայկական Խնդրին: Մամուլը՝ պաշտօնական, անպաշտօն, կուսակցական, ոչ-կուսակցական չեն դարձրում ընդարձակ էջեր նուիրելուց: Այդ բոլորի ընդհանուր արտայայտութեան ձևը, չափը, միտումները՝ համակրական և պաշտպանողական են: Ամէն կողմից էլ այն կարծիքն է արտացոլանում, որ ճաճկահայերի դրութիւնը անտանելի է, հարկաւոր է մի բան անել, և ուսուկառավարութիւնը այդ նկատմամբ՝ որոշեալ պարտականութիւն և իրաւունք ունի:

Հայկական Դատի ամենատխտուր բողոքների մէջ ի՛սկ՝ ուսու անկախ և յառաջադէմ ճամուլը միշտ համակիր վերաբերմունք է ունեցել: Նորութիւնը միայն պաշտօնական և կիսապաշտօնական այն ազգայնական թերթերի համար է, որոնք երբեմն կատաղի թափով հայահալած քաղաքականութեան ջատագովանքն էին անում: — Ուրեմն փոխուած մի բան կա՛յ՝ ըստ երևոյթի:

Ցարի կառավարութիւնը շարունակ հակահայկական դիրք ունէր, ճանաւորապէս Ալեքսանդր III-ի օրերից սկսած. — հայկական շարժում, հայ կենսունակութեան պայմաններ, հայ վերածնութեան միտումներ՝ ուսու պետական շահերին անհամապատասխան էին թուում և նրա

Հեռաւոր ու ձօնաւոր ձգտումների հետ՝ անհաշտելի նրա այդ անողոր սլին արտայայտուեց 1885-ին, երբ իր և Գերմանիայի շախմատները Մայիսեան Ծրագրի գործադրութիւնը ի դերն ելաւ և Համիդը laisser-faire-ի այդ դիրքից օգտուելով՝ Հայկական կոտորածները առաջ բերեց: Ժամանակի այդ քաղաքականութիւնը ամբողջապէս խտացած էր Լօբանովի այն յայտարարութեան մէջ թէ՛ Ռուսիան «չէր կարող թոյլ տալ, որ իր Արևմտեան սահմանների վրայ մի նոր Բուլղարիա ստեղծուէր»: — Ու տիրում էր Հայաստանը քաղաքականութիւնը՝ ներքին և արտաքին:

Ռուս կառավարութեան օրգանը Համարուող բոլոր Հաստատութիւնների ներկայացուցիչները դիրքը այժմս Համակը ր ա կ ա ն է, — այդ է ցոյց տալիս իրերի արտաքին կեղևը: Հակադրութիւնը որոշ է, ուրեմն այդպէս էլ փոխւած մի բան կայ:

Ռուս տիրող դատակարգը և նրա շահերը արտացոլացնող կառավարութիւնը, երևում է, վերաքննութեան, վերազնահատուծի ենթարկելով իր առաջուան Հասկացողութիւնները, ինչոր վերաբերում է իրերի մնացուն իրողութիւնների բնատրութեանը, տարբեր եղբակացութիւնների է հասել, և ահա հէնց դրանից էլ բղխել է այն դիրքը, որի վրայ կանգնել է:

Մի ժամանակ Հայի նկատմամբ, ինչպէս և բազկացուցիչ միւս ճասերի, ամէն ինչ հարթել, հաւասարեցնելու քաղաքականութիւնն էր տիրում: նա մի դիւրամարտ պատառ էր նկատուում: Սակայն իրականութիւնը եկաւ հասկացնելու, որ ո՛չ միայն այդ հաշիւները սխալ հիմունքների վրայ էին դրուել, այլև իրերի այդ կերպի ըմբռնումը և հետապնդումը վնասակար էր տիրողի շահերին: Հայ ժողովուրդը տնտեսական արտադրութեան մէջ մի խոշոր ոյժ էր ներկայացնում, անկարելի էր մինչև վերջ նրան բացառիկ պայմանների մէջ պահել, առանց պետական գանձարանին հարուածելու: Կառավարական շահը պահանջում էր նրան այդ տարածքի գրութիւնից հանել. — այդպէս էլ եղաւ:

Ռուսաստանը բացառութիւն կազմել չէր կարող. դ է մ օ ս ը այնտեղ էլ իր պատմական ուղիի մէջն էր մտել: Եւ այդպիսի բոպէին չէր, որ բազկացուցիչ ազգութիւնների գոյութեան պայմանների շնորհիւ ներքին քաղաքականութեան համար ամուր պատուանդան կարող էր լինել: Ռուսացման ձգտումը, բնական է, որ ժայռի պիտի բաղխէր, քանի որ արդէն կազմակերպուած ազգութիւնները կատարի կռուի պիտի բռնուէին: — Արդ, վերջին տարիների մէջ պատահած իրողութիւնները եկան միահամուռ հաստատելու, որ ռուս ազգայնականութեան այդ միտումը պետական հիմունքների հետ խաղալու բնոյթն ունէր. — տիրապետողը դրա պիտակցութիւնը ունեցաւ և իր շահի տեսակէտով՝ իր ընթացքը մեղմացրեց:

Հայ ժողովուրդը, որպէս ընդդիմադիր ազգակ, իր որոշ դերն էր ունեցել՝ համապետական կեանքի մէջ. նրա պատմաանհատական գոյութեան հիմունքները յարգելը բնաւ անհամապատասխան չէր բոպէի պահանջին, — ահա միջին եզրակացութիւնը, որին հասել էր տիրապետողի տեսաբան քաղաքագէտը. ուստի ք ա ղ ա ք ա կ ա ն վարձուելի փոփոխութիւնը դառնում էր շահաբեր: — Ամէն ինչ ստորադասուած է տիրողի շահին և նրանից է բղխում:

Պատմութիւնը նուազ չի բացատրում և՛ արտաքին քա-

ղաքականութեան փ օ փ օ խ ու թ իւ ն ը: Ռուսիայի ներկայ դիրքը՝ Հայկական Խնդրի առթիւ աւելի պարզ կերպով հասկանալու համար, հարկուոր է նախ մի քանի սողով վերջիշել նրա Արևելեան քաղաքականութեան ուղղութիւնը:

Այն օրից, երբ Ռուսիան Արևելեան Խնդրի ազդակն է հանդիսացել, նպատակ է ընտրել օսմանեան պետութիւնը քաջբայել, նրա ժառանգորդներից գլխաւորը լինելու հեռանքիարով. նպատակին հասնելու միջոցներն են եղած՝ ուղղակի յարձակում, օտար տէրութիւնների հետ համաձայնութիւն և օսմանեան աւերակների վրայ փոքրիկ պետութիւնների վերաստեղծում: Եթէ երբ և իցէ նա հովանաւորել, պաշտպան է հանդիսացել Թիւրքիային, այն էլ միայն նրա համար, որ ժամանակ վստասիկ՝ աւելի ապահովաբար կլանելու համար: Խնդիրը աւելի որոշ կը լինի, երբ մատնանիշենք նաև այն իրողութիւնը, որ մի ամբապնդուած, վերածնունդ Թիւրքիա երբէք ցանկալի չէ եղել Ռուսիային, նամանաւանդ ազգայնական, համիլադական, համաթրքական միտումներով առաջնորդուող, — որպիսի հովեր վերջերս առաւ «Իստիհատ» ի առաջնորդութեամբ ճանապարհ ելնող «Սահմանադրական» Թիւրքիան:

Ռուսիան, ուրեմն, այսօր, ինչպէս և երէկ, կանգնած է իր պատմական քաղաքականութեան հիմունքների վրան:

Յունաստանի, Սերբիայի, Ռումանիայի, Բուլղարիայի վերաստեղծման մէջ՝ Ռուսիան բարեացակամ, դրական որոշ դեր է ունեցել: Սկզբում այն միայն էր փայփայլում թէ բարերուածները, որպէս երախտագիտութեան հաւաստիք, միշտ էլ բարերարի թևի տակը կը մնային: Բայց որովհետև ներկայ քաղաքական կեանքի մէջ ամէն ինչ բացառապէս շահի վրայ է յենուած, ուստի բարոյական զգացմունքների մասին լսօսք լինել չէր կարող: Երբ «փոքրիկ պետութիւնները» ոտքի եկան, սկսեցին քայլել պատմութեան ցոյց տուած ճանապարհով, աւելի քան բնական էր, որ նրանք «շնչէին» իրենց սեպհական «ուռններով»: Ռուսիան խոժոռեց, քէն արաւ, սպառնաց թէ ինչո՛ւ նրանք չեն շնչում «ուռնական ուռններով», — յայտնի Ուիլիամ Ուայթի զեղեցիկ ասացուածքին համեմատ — բայց վերջը ինքն էլ համոզուեց, որ նախկին անհաշտ դիրքից վայր գալը և՛ս աւելի նպատակայարժար, և՛ս աւելի համապատասխան էր իր պետական շահերին — այդպէս էլ եղաւ: Անշուշտ, ուռնական անմիջական հովանաւորութեան տակ գոնուող, ամէն ինչի մասին Պետերբուրգից կարգախօսը աւնող Յունաստանը, Սերբիան, Ռումանիան, Բուլղարիան էլ աւելի լաւ, էլ աւելի ձեռնառու էին մոսկովեան շահերին, բայց պատմութիւնը եկաւ ցոյց տալու, որ իրենց սեպհական «ուռններ» ու շնչող այդ պետութիւնների գոյութիւնը և՛ս աւելի շահաւէտ էր, քան նրանց փոխարէն տեսնել մի ահեղ Թիւրքիա: Լօբանովեան շրջանը, իրաւ է, քէնտեց իր ինքնուրոյնութիւնը պահել ուղող Բուլղարիան տեսնելով, բայց այսօրուայ կեանքը եկաւ ցոյց տալու, որ պատմութեան մէջ զղջումները նշանակութիւն չունեն. իրերի տիրող նոր բնատրութեան առաջ նոր դիրք են բռնում, — բաւական է որ այդ նորը չը հակասէր արդէն եղած ընդհանուր շահերի ուղղութեանը և հիմունքներին:

Ռուսիան ուղեց նորակազմ պետութիւնները իր վաստակները դարձնել, — չեղաւ. բայց դա չարգիլեց, որ նրանց աւելի

նախապատուութիւն տար և շահի բարեկամութեամբ կապուէր՝ իր հեռուոր նպատակների համար, ինչոր վերաբերում է օսմանեան պետութեան վերջնական ճակատադրին:

Թիւրքիան Եւրոպայից արտաքուսեց՝ սովորական է դարձել ասելու. ենթացողք թէ նա գնացած լինէր իւր "bag" և "baggage"-ը առած, Գլխարտնի ասածով. թէև իրականութիւնը այն է, որ նա Եւրոպայումն է, որքան ժամանակ որ Կ. Պօլիսը նրա ձեռքումն է: Դեռ այդ էլ հերիք չէ: Եւրոպայից քաշուելով Թիւրքիան ո՛ւր պիտի սեղծուէր, — Ասիայի մէջ. բայց միթէ՞ նա այդտեղ կղզիացած՝ աշխարհից կտրուած պիտի մնար, ո՛չ որ չպիտի հեռաքրքրուէր նրանով, և նրան հանդիս սովոր թողնէին. — երբէք: Արևելեան Խնդիրը խուսափէս Արևմտեան Խնդիր է. եւրոպական շահերի ալիքները Թիւրքիայի ամբողջ տարածութեան վրայից են անցնում, պետութիւնների համար Ասիական Թիւրքիան եթէ ոչ գերազանց, գէթ նոյնքան արժէք և նշանակութիւն ունի, որքան որ եւրոպականն էր: Արդ, ո՛չ միայն շահերի տեղափոխութիւն, այն նոյն սաստկութիւնը, նոյն ուժգնութիւնը կայ: Եւրոպայից մի քանի հազար քիլոմէտր հող Բալքանեան Գաշնակցութեան ձեռքն անցնելով՝ Խնդիրը չը վերջացաւ:

Արևելեան Խնդրի կծիկը քանդուած է 1683-ից ի վեր, կատարուածը հազու թէ մի ճասն է, շղթայի օղակներից մի քանիսի անկուծը ամբողջ շղթայի վերջացումը չի ենթադրում: Եւրոպականութիւնը կայ:

Արդ, Արևելեան Խնդիրը պէտք է վճռել. դաժնկեան այդ սուրը կախուած է պատմութեան ընթացքում:

Այստեղ խօսքը տալիս ենք ճեմանուն Ուիլիամ Ուայթին (William White) որ հաղորդագրել է հռչակաւոր քաղաքագէտ Ռօբերտ Մօրիէին (Robert Morier) դեռ 1885-ին, երբ անգլիական քաղաքականութեան փոփոխութեանն էր հետաախնդում:

"Ապագայում" Եւրոպական Թիւրքիան, գէթ մինչև Ազրիանուպօլիս, վաղ կամ ուշ, անպատճառ պիտի պատկանի Քրիստոնեայ Յեղբրին . . .

"Ռուսաստանը և նրա Արևելեան գործակալները մեզ միշտ մեղադրել են, որ Թիւրքիայի քրիստոնեայ ջեղերի ազատագրութեան գլխաւոր խոչնդոտն ենք եղել: Այլևս գոյութիւն չունի այն պատճառը, որի համար մասնաշատուկ մի քաղաքականութեան էինք հետևում. հիմա ազատ ենք անկողմնակալ կերպով գործելու և՛ որոշ սահմանափակումներով աստիճանաբար ձեռք առնելու քաղաքական այն ուղեգիծը, որ Պալմերստոնի համբաւը կաղծեց՝ Բելգիայի և Իտալիայի նկատմամբ, և այլն: Ռուսները զո՛ւ հաբերութիւններ արեցին՝ ազատելով Յունաստանը, Սերբիան և Իշխանապետութիւնները, բայց իրենց ամբողջ ազդեցութիւնը կորցրին այդ երկրներում. միայն Մօնթէնէպրօն է մնացել հաւատարիմ. հիմա Բուլղարիան էլ կորցնելու վրայ են . . . Նոր ազատագրուած ցեղերը ուղում են թարմ օդ շնչել, բայց ո՛չ թէ ռուսական ռունգներով . . . Ես զգում եմ, որ այդ բոլորը իրենց հակահարուածը պիտի ունենան Ասիայում, բայց Եւրոպայի մէջ չենք կարող մեզ կաղապարել միմիայն Ասիական նկատումներով: Ահիերև է, որ մեր ճեմագոյն շահը Ասիայումն է, բայց մենք տակաւին եւրոպական դիրք ունենք և նոյն խիւ եւրոպական շահեր:"

Մեծն Բրիտանիան էլ, ինչպէս երբեմն Ռուսաստանը,

պարզ աշխարհակալական քաղաքականութեան ուղին էր բըռնել, բայց պատմութեան անխորտակելի ժայռին հանդիպելով՝ ստիպուեցաւ, իր շահը չը վտանգելու համար, փաթրիկ պետութիւնների՝ մանաւանդ ծովափայլին, ստեղծուելուն կողմնակից լինել:

Ռուսաստանն էլ պատմութեան այդ հոսանքի առաջն էր կանգնած, և իր ուղին բռնեց:

Խնդիրը ճանաւորեց չայերին:

Ռուս պատմութեան դարգացման մէջ մի որոշ դարձաւորըն է եղել, երբ պետական գործերը դեկալարող պատասխանատու անձերը, իրերի մնայուն իրաւութիւններից ճղուած, պէտք են տեսել ո՛չ միայն հայ ժողովրդի համակրութիւնը ձեռք բերել, այլև լիակատար միջոց տալ՝ նրա ազգային կուլտուրական բարգաւաճմանը: Այդ ուղղութեամբ երթալով, նոյն խիւ միտք է յղացուել Հայ Պետութիւն առաջացնել՝ ռուսական հովանաւորութեան տակ: Պատմութիւնը այդ ճասին անվիճելի փաստեր ունի: Ասիական աշխարհակալութեան մէջ, երբ կաղճակեցաւ, զօրեղ պետութիւններ քայքայելու անհրաժեշտութիւն էր ներկայացել, ստիպուական էր դարձել յենուել այդ պետութիւնների մէջ կարևոր դեր ունեցող մի այնպիսի նուաճուած ժողովրդի վրան, որպիսին էր Հայը՝ որ իրականորէն կուռան լինելու ամէն յասկութիւններ ունէր: Հայկական պետութիւնը մի տեսակ թուճք, մ ա Ր Վ պիտի լինէր՝ շրջապատող թշնամիների հանդէպ: Ժամանակի ռուս քաղաքագէտները Հայ ազգի վերածնութեան մէջ մի այդպիսի դեր էին տեսնում, ռուսի ձգտում էին յայտնում Հայ պետութեան ստեղծումին ոյժ տալ: Պատմական այդ հոսանքը իր գագաթնակէտին հասաւ Եկատերինէ Ա-ի օրօք:

Կովկասի և Անդրկովկասի տէրը դառնալուց յետոյ—հայերի տուած օգնութիւնը այդտեղ որոշ էր, — ռուս պետական անձերը այլևս աւելորդ համարեցին Հայկական Պետութեան ստեղծուելը՝ այն հասկացողութեամբ, որ Պարսկաստանը և Տաճկաստանը ա՛յնքան թոյլ, ներքին քայքայումի ա՛յնքան առատ տարրեր էին ներկայացնում, որ առանց դրան էլ իրենց նպատակին կարող էին հասնել:

Եւ միայն այդ չէ. որպէսզի թշնամի ճահճեղական պետութիւնները, ճանաւորապէս Տաճկաստանը, անկարող լինեն օգտուելու իրենց բաղկացուցիչ յառաջադէմ ազգերի բարգաւաճումից և այդպիսով վերածնունդի, ամբախնումի մէջ ճրտնելու առանձին կուռաններ ձեռք չբերեն, — նա՞ տիրողների հետ միացաւ յաճախ՝ Հայ ժողովրդի բողոքի ձայնը խեղդելու և նրան իր դժգոհ վիճակի մէջ պահելու:

Արդ, եթէ Ռուսիան դարձել է համակիր՝ դէպի Տաճկահայ Գատը և ցանկանում է, ինչպէս երևոյթը ասում է, նոյն խիւ Ինքնավարութեամբ օժտուած մի բարեկարգուած Հայաստան տեսնել՝ իր հովանաւորութեան տակ, այդտեղ զարմանալու՝ հակաքնական ոչինչ կայ: Մի Ինքնավար Հայաստանի գոյութիւն երբէք արգելք չի կարող լինել ռուսական ասիական հեռուոր նպատակներին՝ նաճանաւանդ եթէ ի նկատի առնուի պետութեանց ներկայ փոխյարաբերութիւնների դասաւորութիւնը:

Պատմութիւնը եկաւ ցոյց տալու, որ անկախ Բուլղարիայի ստեղծուելը հ ա կ ա շ ա հ ու թ իւ ն չը՝ ներկայացրեց. նոյն պատմութիւնը գալիս է ասելու, որ Ռուսիայի արևմտ-

եան սահմաններն ըրտյ ծի նոր՝ հայկական Բուլղարիայի առաջ գալը ո՛չ ծի կերպ արգելք պիտի լինէր դէպի Ասիա տարածուող ուսական ալիքներին: Եթէ դրանք իրենց գոյութեան և յառաջացման իրաւունքները ունէին արդէն:

Մի շարք դէպքեր եկան արտայայտիչը լինելու հայի զինուորական և կուլտարական յատկութիւններին, — հեռուտես պետական անձնատրութիւնները այդպիսի ատուղձից կարող են օգտուել, և դրանով աւելի լաւ պայմանների տիրացած՝ իրենց հեռուոր ծրագրերի գործադրութեանը ձգտել: Ու եթէ ուսս զիւանագիտութիւնը այժմս այդ ուղղութեան վրան է կանգնել ուզում, դրանով ո՛չ ծիան իր շահն է ապահովում, այլ իր ճանապարհը աւելի հարթ դարձնում:

Բասֆորի ալիքների կիսարարական հայկական Բարձունքների վրայից են անցնում: Մէկը սուանց ծիւսի չի կարող լինել:

Աւելի քան երկու հարիւր տարուայ իր արեւելախաղաց ու ղ ա ց ու ղ ղ դեռ Պետրոս Մեծի Ազովի վրայի բացած պատուհանից այն կողմը չանցաւ՝ իրականին ճէջ:

Ջապոնիան հսկայի պէս կանգնեց, նրան ջախջախել, կոխկրտել և վրայից անցնել անկարելի է. պատմութիւնը այդտեղ դրեց իր վերջակէտը:

Մայրագոյն Արևելքի ճասերում, իրերի հրամայականութեամբ, փոքրիկ պետութիւնների ստեղծումը այժմս աւելի քան ձեռնտու, աւելի քան շահաւոր է նկատում: Բայց դա դեռ հեռու է ովկիանոսից, «յաւխաննականութիւնը ներկայացնող հեղուկից»: Ռուս կապիտալիզմը հսկայական քայլերով առաջ է գնում, այդ ուղիւր դուրս պիտի թափուի, — բայց փորձը ցոյց տուեց թէ նա ինչ աղէտի կարող է ենթարկուել, երբ իր սահմանների դուսապանը ունենայ գորեղ Օսմանցին՝ Բասֆորի, Դարդանէլի բանալիները գրպանին: Մի հսկայ ճարմին գաճաճի անկողնի ճէջ չի կարող բովանդակուել: Ռուս թոքերը չեն կարող շնչել, նրա կապիտալիստական երակները իրենց ելեւէջը կանոնաւոր կերպով չեն կարող կատարել՝ առանց ովկիանոս—արտի: Ու դէպի այդ կողմը զինելը դարձել է ճակատագրական, ճահու և կենաց խնդիր:

Մի Խնքնալար հայաստան, եւրոպական ճշակոյթի ներկայացուցիչ հայ ժողովրդի առաջնորդութեամբ, հարկաւ կարող է այդտեղ ճեծ և անփոխարինելի դեր խաղար: Խնքնալար հայաստանի գոյութիւնը չի հակասում ուսս պետութեան հիմունքներին և՛ հակառակը. ինչպէս որ նա բնաւ չի վնասում օսմանեան պետութեան հիմնական պայմաններին, եթէ նրա դեկավարիչները քաղաքականութիւն հասկանալու ծի քիչ լայն ուղեղը ունենան: Եթէ Ռուսիան վերադարձ է կատարում դէպի իր հին քաղաքականութիւնը և որպէս արտայայտութիւն դրան՝ իր համար անքն է յայտնում դէպի հայկական Խողիւրը, — դա ուղիղ կերպով հասկացում պետական շահի, ուղիւրէն յորդող կապիտալիստական ընդարձակման պետական պահանջն է: Մարդիկ չեն որ դգացմունքներ են արթնցնում և գաղափար ճնեցնում, — իրերն են, սրանց տիրապետող բնաւորութիւնն է որ դգացմունքներ, ճրտքեր, գաղափարներ են արտադրում: — Եղածը կապիտալիստական յառաջադիմական ծի քայլ է, որ ունի իր վճռող պայմանները:

Իսկ եթէ Մոսկովեան զիւանագէտները իրենց այդ արարքների տակ ճածկում են ճասնաւոր, անթափանցելի ճրգ-

տուճներ, — հայ ժողովրդին պատուանդան անել թուչելու և նորանոր աշխարհակալութիւններ անելու. եթէ նրանք այս անգամ էլ 1895-ի՝ սկզբնական շրջանում՝ ճայիսեան ճրագրի առթիւ արտայայտած հնարիճայութիւնների նճան վարպետութիւններ են գործ դնում՝ գանազան հեռաւոր նպատակների համար, — դրա ճէջ սխալում են և ապագան կը գայ ցոյց տալու, որ արդարեւ սխալում են. որովհետև հայ ժողովուրդը պատմական փորձաւորութեան ա՛ջնքան ճեծ ճթերը ունի, որ նա զիւրութեամբ չի խաբուիլ և ճէկ ուրիշի գործիքը չի դառնալ, բացի իր սեպհական գործիքը և ճիւնգամայն տէրը լինելուց:

Ազգերը, որպէս պատճառահատական գոյութիւններ, իրենց կեանքը պիտի շարունակեն, որքան որ ներքին կենսունակութեան պայճաններ ունեն: Ազգերի, ժողովուրդների համերաշխութիւնը, եղբայրակցութիւնը ճարդկային քաղաքակրթութեան քարտէսի վրան գրուած է: Թո՛ղ ապրեն բոլոր ազգերը, բայց ապրի հայն էր: Թո՛ղ աճէն ազգ ունենայ իր գոյութիւնը պահող՝ ցանկալի աճէն պայճաններ: Նոյնը ճենք ենք պահանջում և՛ ճեզ՝ հայերիս համար, որպէս դրական և անժխտելի ծի իրաւունք:

Վստահ՝ ճարդկային անսահման յառաջադիճութեաս վրայ. ապահովում հայի ներքին կենսունակութեան ճասին, ճենք այժմեանից իսկ անդրդուելի կերպով համոզում ենք, — և ճարգով, սրտով, հոգով էլ ճաշակում ենք արդէն—որ հայաստանի Խնքնալարութիւնը արդէն զրոշումած է քաղաքակրթական, յառաջադիմական քարտէսի վրան. նա կը գայ, կը կատարուի, ճարմին կառնի, կիրականանայ: — դա ստուգութիւն է. դա ճարդկային պատմութիւնը, քաղաքակրթութեան հոսանքն է ճեզ ասում:

Խնդիրը առայժմս բաց է մնում. հարցն է թէ նա ո՛ր տեղից, երբ և ի՛նչ ճեղով պիտի գայ:

Հէնց դրա ճէջն էլ պիտի աճփոփուի ճեր ճօտաւոր, անճիջական գործունէութեան էութիւնը, ինչոր վերաբերում է հայկական Խնդրին:

Արդ, ճենք՝ ժամանակակից քաղաքակրթութեան օգտակար և ոսնակոխում արգարութեան իրաւունքի վերահաստատութեան համար՝ ճասնաւորապէս շահագրգռուող աջակից ճիւն կը նկատենք արտաքին այն ճեռքերը, որոնք դէպի այդ կողմը կուղղուեն:

Պատմութեան ընթացքում ոճիրներ գործում են դէպի ազգերը, դէպի ժողովուրդները, դէպի դասակարգերի իրաւունքները, բայց այդ բոլորը անհետեանք, անպատիժ չեն մնում. յանցապարտները իրենք են, որ իրենց կաշիի գնով վերջ ի վերջոյ քաւում, տուժում են:

Ժամանակակից բուրժուազիայի կառուցած շէնքերից ո՛րը անդրդուելի մնաց, — և ո՛չ ճէկը, որ երկրի ճէջ էլ որ աչքներս դարձնելու լինենք:

Անիրաւող բոլոր երկրների արտաքին, ներքին գործոց նախարարութիւնների գրասենեակները շարունակաբար իրենց աչքի առաջ ցցում են տեսել՝ գործում ոճիրների, անարգարութեան զոհերի կարմիր ուրուականները: Մակբետի հոգին, դգացմունքները իրենցն է եղել, որովհետև արեան բիճը ճիշտ մնացել է իրենց ճեռքի, խղճի, յափշտակութեան թաթի վրան: Իրենք առաջինն են եղել, որ սարսափել են, յարատւօրէն երկիւղի, տանջանքի ճէջ են ապրել՝

իրենց իսկ սեպհական ձեռքերով և ճիշտներով կերտած անարդարութեան զգեալներէց, իրենց արուեստական, հակաբնական, իրերին անհամապատասխանող կառուցուածքներէց:

Մեատերնիխ, Բիւսարի, Գիզօ, Բիկօնաֆիլլը, Լօբանով . . . Քի՛չ են ահաբեկուել իրենց արարքներից և այն ճիշտներից, որոնց զիմել էին իրենց գծագրած քաղաքական շէնքերը յաւերժացնելու համար: Բայց ճինչև ո՞ւր, ճինչև երբ յաջողեցան: Ո՞վ ընկաւ վերջը: Իրերի բնական ընթացքը չը խախտեցին, չքանդեցին նրանց երազների պարտապնդերը:

Մեատերնիխը ճիւղն արհամարհական ժպիտ ունեցաւ 1815-ին, երբ Սերբ «սղորմելի» գիւղացիների բազմութիւնը՝ «Աշխարհիս Մեծ» երի, «Ահհափառ» ների կազմած «Կօնգրէս»-ի զուտն առաջը կանգնած՝ աղաչանք, պաղատանք էր թափում, զութ էր հայցում: Այսօր Սերբիա և Աւստրիա, — ո՞րքան փոխուած դիրքեր:

Բիւսարիկը իր «ազնիւ ճիշտորդ»-ի դերը կատարեց. ո՛չ նուազ պարծեցաւ և՛ Բիկօնաֆիլլը իր «տարած յաղթութեան» համար: Բայց իրերը, այսօր, ո՞ւր հասցրին նրանց հիմար-կութիւնները: Բուլղարիան, Յունաստանը մնացին իրենց համար վերեւից նշանակուած ջերմոցի մէջ:

Քաղաքակրթութեան, յառաջադիմութեան ուղիքը կասեցրնել չի կարելի՝ ճարդկային բիրտ ոյժը զրան չի պատիլ, ինչքան էլ որ նա ահեղ թափով երևան գալու լինի:

Իրերի հէնց այդ ընթացքը աչքի առաջ ունենալու համար է, որ ասում ենք թէ նա մի օր էլ անպայման պիտի խօսի, գործի, երևան գայ, արդիւնաւէտ հանդիսանայ և՛ Հայաստանում, և՛ Հայ ազգի նկատմամբ: Այն՝ ինչոր բնական է, ինչոր իրերի բնատրութեան համապատասխան է և օրէնք՝ նա մե՞զ համար ճիւղն բացառութիւն պիտի կազմի, և ինչու:

Արուեստական կառուցուածքները ո՞ւր քանդուած չեն, որ Հայաստանումն էլ հիմն ի վեր չը տապալուեն: Մեր օրերում՝ ո՞ր կենսունակ ժողովուրդը ազատագրութիւն չը գտաւ:

Անվհատ գործունէութիւն. պատմութիւնը — և նա շատ էլ հեռու չէ — մի օր կը գայ իր խօսքը ասելու մե՞զ համար էլ:

Գալիքի լիակատար վատահութիւնը ունենանք և ձծե՛նք այն հիմակուանից:

Ս. ԱՅԳ-ՎԱՐԴԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ԵՈՒՐՉԸ

Ժամանակակից խնդիրներէն մէկն է և՛ Հայկականը. նա օրակարգի մէջ է, հասարակական կարծիքը նրանով է զբաղուած. ուստի մեզ համար կենսական այդ խնդրին՝ բազմակողմանի հայեցակէտերից ծօնենալը՝ բացարձակ անհրաժեշտութիւն է:

Նախ մի քանի պետութեանց զիրքը՝ շատ համառօտ կերպով:

Բիւսարիկը և Կ. Պօլսոյ գերմանական դեսպանը, երբեմն, բարեկամական խոհուրդ էին տուել Բ. Իրան՝ մի կերպ լուծել Հայկական Խնդիրը, որպէսզի նրա ալիքները չը տարածուէին և չը վարակէին միւս վայրերը: Հասկանալի է թէ զրանով նրանք ինչ էին ուզում ասել: — Այժմ գերմանական Ռուսիա-

տագում, ընկեր Լէդէբուրը աղաղակում է թէ՛ Վանում կատարուող դէպքերի հեղինակը Ռուսիան է, որ կուզէ այդպիսով Հայկական Խնդիրը վերարձարծել և Հայաստանը գրաւել: 1)

Արևելեան Խնդիրների մասին համբալորէն խօսող ընկեր Լէդէբուրը պիտի գիտնար, որ Հայաստանի մէջ կատարուող դրամաների հեղինակները պիտի սրանել հէնց Կ. Պօլսում, իսկ նրանց քաջալերողը՝ Բերլինում: Իրողութիւն է, մեր կարծիքով որ եթէ Պետերբուրգի ազգու ճիշտամտութիւնը և ուսու ճամուլի սպառնալից շեշտը չը լինէր, — այս անգամ Հայաստանի մէջ կատարած տեղի պիտի ունենար՝ ամենայն հաւանականութեամբ: Ընկեր Լէդէբուրի համար զժուար չէր հասկանալ, որ ճիշտագային ներկայ փոխ յարաբերութիւնների գտաւարութեամբ՝ սուսական գրաւում երբէք չի կարող լինել՝ ինչոր վերաբերում է Հայաստանին:

Մեզ յայտնի է համագերմանական ձգտումի աստաւը, ինչոր վերաբերում է Թիւրքիային, հետևաբար ընկեր Լէդէբուրը իր բունած զիրքով գալիս է գերմանական բուրժուազիայի շահը, գերմանական կայսերականութեան ձգտումները պաշտպանելու, քան պրօլետարիատի, որի անունով ինքը սակայն խօսում է, որովհետև գերման պրօլետարիատը կորցնելիք ոչինչ ունի, եթէ նայն իսկ Հայաստանը ուս թևարկութեան տակ անցնէր: — Գերմանիան Թիւրքիան կործանող ոյժ է՝ իր հեռուոր նպատակների հետապնդումով, նրանից ո՛չ մի օգուտ, ո՛չ մի շահ ունեն ասանջուող, ազատագրուող ժողովուրդները, ուրեմն և հայերը:

Ճնշուող ազգերի ազատագրութեան պատմական հակառակուրդ Աւստրօ-Հունգարիայից մենք՝ բացի անմեղ բաւերից՝ իրականորէն ոչինչ ունենք սպասելիք:

Իտալիան վերջերս իր իսկական գոյնը ցոյց տուեց: Տըրիպօլսում, աշխարհակալողի դէմ կուռող արաբների երեսխանների ճորթոտութիւնը, կանանց սրակաղխողութիւնը վերլիշեցին ճարդկային բարբարոսական պատմութեան ամենատխուր էջերը: Էգէան Ծովի մէջ, հէլլէնների վրայ գործադրած իր խժովութիւններովը՝ Իտալիան գալիս է յայտարարելու, թէ իրեն համար ի՛նչ արժէք կարող է ունենալ Թիւրքիայում ճնշուող ազգերի, ուրեմն և հայերի ազատագրութեան գործը: Նախարարապետ Սան-Ջիւլիանօն՝ պարլամէնտի մէջ արտասանած իր ճառով՝ խոտոացաւ պաշտպանել Թիւրքիայի ասիական կալուածների "ան ձեռն մխելի ու թիւնը".

(1 Գերմանական Սօցիալ-Դեմոկրատիայի անդամներից ոմանք, երկուս է, քաղաքական մի առանձին դալտօնականութեամբ են վարակուել ինչոր վերաբերում է Հայկական Խնդրին եւ Հայաստանի մէջ տարիների ընթացքում կատարուած շարժումներին:

Յայտնի Վիլհէլմ Լիբկնիխտը դեռ 1894-1895-ին անհեթեթ այն մրտքն էր յայտնում թէ որովհետև հայկական շարժումները արդիւնք են ոուսական դրողումների, ուրեմն սօցիալիստները այդ խնդրին հակառակ դիրք պիտի քաննէին, որանով Ռուսիային հարուածելու:

Ընկեր Ժօրէան էլ, նրան հետևելով, la Petite République-ի մէջ անուշին անգամ այդ թէքը պաշտպանեց: Իրերը այդ կերպ էր հասկացում, մինչև որ հնչակուան գործիչները Խնդրի էութեան հետ նրանց ծանօթացրին՝ առանձին յիշատակագրութիւններ տալով Հայկական Խնդրի ծագումն, շարժումների քննադրութեան ու նրա ազդակների մասին: Դրանից յետոյ էր, որ կարծիքների փոփոխութիւն տեղի ունեցաւ:

Երբեւում է որ ընկեր Լէդէբուրը իր ի՛սկ կուսակցութեան պատմութիւնից տեղեկութիւն չունի, — գէթ նրա անցեալ դիրքի՝ Հայկական Խնդրի վերաբերմամբ: Խմբ:

— արդե՞ք դրանով ճառախօսը ակնարկում էր Հայկական Խնդրի լուծման պարագան էլ ինչոր հաւանական է, մտածելով որ նա ճի օր կը վճռուի Հակառակ "Յուպետական Դաշնակցութեան" շահերին — Իտալիայից, պարզ է, շատ բան չի պահանջում, եթէ ուղղակի հակառակութիւն էլ չը լինի:

Փրանսիայի արևելեան քաղաքականութիւնը, նամանաւանդ ինչոր վերաբերում է Հայաստանին, ո՛չ միայն յարակից, այլ գլխաւորապէս պիտի ենթարկուի Ռուսիայի արտաքին քաղաքականութեան:

Ապա Հանտօռի թրքասէր քաղաքականութիւնը! ապա երրորդ Հասարակապետութեան կողմից բռնաւոր Համիդին էրէյլի ածխահանքերի համար՝ Հայկական հարցը յուզելու եղած սպառնալիքը! ապա այդ արմատականների դէպի "Ժէօն Թիւրքերը" ցոյց տրուած համակրութիւնը՝ Կիլիկիան արիւնոտ օրերում անգամ:

Այժմս չափից աւելի նշանակութիւն չպիտի տալ բուրժուազական Եւրոպայի հասարակական կարծիքին՝ որովհետև նա ոչինչ չէ, եթէ ո՛չ միայն դասակարգային շահերի հայելին, ուր արտացոլում է այդ շահերից, միայն և միայն այդ շահերից, բոլոր տեսակէտները: Ինչքան էլ եւրոպական ճամուլը ունենար որոշ և երբեմն նոյն խի ազդեցիկ հանգամանք՝ անուամենայնիւ նա այն ամենազօր կամքը չէ՝ կամք եւրոպական դ է մ օ ս ի, որի հրամանին հպատակուի միջազգային դիպլոմատիան, որի առաջ խոնարհուի միջազգային քաղաքական մտածմունքը. նա դեռ ևս վճռող գորութիւն և որոշող ոյժ չէ բովանդակում իր մէջ: Կրկնում ենք նորից՝ որ նա չէ թէ իսպառ զուրկ է ո և է նշանակութիւնից, — ո՛չ. այլ նա չունի տակաւին այն արժեքը՝ որ կարողանայ արձակել քաղաքական կապանքները, լուծել սօցիալական հանգոյցները, վճռել արմատապէս ազգային կնճիռները և որպէս այդպիսին, նա չի կարող մեր փրկութեան գլխաւոր ազդակ համարուել՝ ուրեմն և մեր գործի մեծ ապաւէն ճանաչուել:

Շատ մեծ նշանակութիւն չունի, նմանապէս, և՛ Լօնդոնում վերջերս կազմուած "Հայկական Կօմիտէ"ն՝ որի անդամների մեծամասնութիւնը իր գոյութիւնը իրապէս և անուանապէս դադարած "Բալկանեան Կօմիտէ"ն՝ անդամներն են: Նրանք իրենց ազատարար միտքի մակերդնիւնի վերաբերմամբ վերջացրել են և՛ այժմ էլ հերթը Հայաստանին է հասել: — Եթէ բանը նրանց մտար, վաղո՛ւց Մակեդոնիոյ անունն անգամ պատմութեան էջերից թիւրքի ետթաղանք ջնջած էր:

Բուլղարիան, Սերբիան Յունաստանը և Մօնթենէգրօն էին՝ որոնք զինու գորութեամբ փրկեցին չարչարուած Մակեդոնիան, որը իր ազատութեամբ պարտական է և՛ ուսս քաղաքականութեան մասնաւորապէս, և՛ Երեւակ Համաձայնութեան՝ ընդհանրապէս:

Պարսկահայերին ազատողը եղաւ Ռուսաստանը, թիւրքահայերին էլ ազատող գլխաւոր ազդակներից մէկն էլ նա պիտի լինի՝ ո՛չ Մեծ Բրիտանիան և ո՛չ էլ Հասարակապետական Փրանսիան է որ Հայաստանի ազատութեան համար թիւրքիային պատերազմ պիտի յայտարարեն. դրանք Հայկական հարցի արձարձման սպառնալիքներով թիւրքիայից շատ բան են ստացել և թերևս ստանան էլ: Միայն Ռուսիան է, որ ամէն կերպ շահագրգռուած է՝ աւելի քան իր երկու հօր համագործակիցները՝ Հայաստանի Ինքնավարութեան մէջ և նա միմիայն

ընդունակ է զինու գորութեամբ հարկադրել թիւրքիային Հայոց Ինքնավարութեան իրաւունքի խնդրը կեանքի մէջ ծարմին դարձնել: Ելի ուսս մուծիկն է որ իր արևնով պիտի ներկէ Հայկական բարձրասնդակը, իր բազուկներով ճեղքէ Տաւրոսը:

Ծովերի Թագուհին՝ Ռուս-թրքական պատերազմից յետոյ, լուրջ կերպով մտածում էր Ռուսական դէպի մերձաւոր արեւելք ունեցած յառաջխաղացման դէմ ստեղծել՝ Ինքնավար Հայաստան՝ որպէս պատուար. այդ նրան չը յաջողուեց՝ պարզապէս այն պատճառով որ Ռուսիան նրա այդ ծրագրին դէմ էր՝ շնորհիւ անգլօ-Ռուսական հակամարտութեան ժամանակի ընթացքում հրապարակ է դալիս այդ երկուսին էլ հաւասարապէս հակառակ մի երրորդ ոյժ, — երիտասարդ, կենսունակ Գերմանիան՝ և այդ պատճառով էլ տեղի է ունենում անգլօ-Ռուսական մերձեցումը. հակամարտութիւնը փոխում է Համաձայնութեան և այսօր երկուսն էլ իրենց շահերի թելադրութեամբ գերմանականութեան մուտքը Հայաստան և Միջագետք արդիւելու համար՝ անհրաժեշտ են տեսնում Հայաստանի Ինքնավարութիւնը:

Մեզ համար, բացի այդ, նշանակալից է նա՛ն մի ա՛յլ հանգամանք, որը հարկադրում է Երբեակ Համաձայնութեան Հայաստանի սահմանը ընդարձակել շատ աւել՝ քան մենք կուզէինք:

Այլևս ո՛չ մի տարակոյս կարող է վերցնել այն ճշմարտութիւնը, թէ թիւրքիան — որ եւրոպական բուրժուազիայի համար շահագործութեան մի ասպարէզ է ներկայացնում, որի մարմինը ամէն կարգի շահագործութեան և պարարտացման բաւարար հիւթ է մատակարարում ու այդպիսով իր խի ձեռքով իր գերեզմանը փորում և այսօր էլ շնորհիւ իտալիական հայրենասիրութեան աճուրդի է հանուած, — եւրոպական մեծ պետութեանց մէջ բաժանման ինդրոյ առարկայ է եղած ակներև կերպով: Ռուսիան Փոքր Ասիան գրաւելու մտքից ըստ երևոյթին ձեռք է քաշել և աւելի շատ մտահոգ է Փոքր Ասիայի վրայով գերմանական արշաւի դէմ պատնէշ ստեղծելու գաղափարով: Իսկապէս էլ Եւրոպան՝ մանաւանդ Գերմանիան ու Փրանսիան՝ երբէք թոյլ չպիտի տան Ռուսաստանի կողմից Փոքր Ասիայի գրաւումը՝ քանի որ նրանք սնտեսական խոշոր ձեռնարկութիւններ ունեն և միլիարդներով գումարներ՝ այդ երկրում — Այնի, Կոնիայի, Գաղատիայի, Կաստէմունիի, Պրուսայի և Պոլսոյ վիլայէթները: Հաւանականօրէն այդ շրջանը վերջ ի վերջոյ լինի Գերմանիայի բացարձակ ազդեցութեան շրջանը: Հէնց այդպիսի հաւանական հեռանկարի պատճառաւ էլ Ռուսաստանը շահագրգռուած է ստեղծելու Ինքնավար Հայաստան այն ծաւալով, որը Սև Ծովից մինչև Միջերկրական Ծովը մի պատուար, լինի Փոքր Ասիայից դէպի Միջագետք, — Մոսուլի, Բաղդադի, Բատրայի վիլայէթները, գերմանական յառաջխաղացման ալիքների դէմ. հէնց այդպէս էլ Ալբիօն է շահագրգռուած, գրեթէ նոյնքան էլ շահագրգռուած է և՛ Փրանսիան՝ իր ազդեցութեան շրջան Սուրիայի, Պէլուսի, Գամակուսի և մասամբ էլ Հալէպի վիլայէթների վերաբերմամբ: Ուրեմն Երեւակ Համաձայնութիւնը, հակառակ իր ներքին հակամարտ շահերի, մի դարձանալի ներդաշնակութեամբ ծառայել է գերմանականութեան վտանգի դէմ և այդ պատճառով էլ Երեւակ Համաձայնութեան շահերը պահանջում են, որ Հայաստանը

տան երկիրը բացի վեց մեծ նահանգներից՝ իր մէջ առնէ նա՛ն Արմենի, Մերսինի, Ճէպլէլը-Պէրէքէթի, Գօլանի, Մաւրաշի և Ուրֆայի սանձագները, — այս պիտի եղրակացնել Երեսկ Համաձայնութեան զիպոմատիայի կողմից եղած այն ազդարարութեան՝ թէ ներկայումս նպատաւոր չէ Հայկական Հարցի անմիջական լուծումը իր ամենալայն ընդարձակութեամբ, այլ պիտի սպասել պատերազմից յետոյ Հրապարակ բերել:

Այդ ընդարձակ տարածութեան վրայ ապրում են աւելի քան երեք միլիօն Հայեր:

Բայց այդ Հանգամանքը երբէք չի կարող ճողրեցնել այն ճարդկանց, որոնք մի ժողովրդի ապագան չեն դատում միմիայն քա՛ն ա կ ի ց. դա չի կարող յուսահատեցնել այնպիսի մտածողներին, որոնք չեն ենթարկում օրուայ Հովերի ազդեցութեան, այլ սառնասրտութեամբ մի երկրի մէջ գոյութիւն ունեցող կուլտուրական, այս բառի լայն իմաստով, արժէքներն են քննում, Հաշուի տակ դնում և որոշեալ եզրակացութեան գալիս:—Արդ, սխալ է այն թէ՛ Հայ ժողովուրդը իր Հայրենիքի մէջ փոքրամասնութիւն է կազմում, բայց ովքեր են մեծամասնութիւնը այդ դէպքում. ինչ էլ որ ասեն Հայի յարաբերական առաւելութիւնը ջախջախիչ է: Հայաստանում գլխաւոր տարրերն են Հայերը երկու և կէս միլիոն, քրդերը մէկ միլիոն, թիւրքերը Հազիւ կէս միլիոն, իսկ միւս ազգերը՝ ասորի, քաղդէացի, եզդիներ, լազեր, յոյներ, չերքէզներ՝ ձօռ կէս միլիոն: Պարզ է՝ ըստ քանակի և ազգութեան, քրիստոնէայ միւս տարրերն էլ առնելով՝ Հայերը աւելի են քիւրդերից և թիւրքերից: Բայց կան և՛ այլ Հանգամանքներ՝ կարևոր ու նշանակալից, որոնք ապագայում՝ այսինքն՝ Հայաստանի ազատութեան դէպքում մեծապէս պիտի ազդեն տուրքային յարաբերութիւնների վրայ: Հայաստանի շատ տեղերում — Տաւրոսի, Անտի-Տաւրոսի, Դէրսիմի, Խնձր-Դալի, Պոնդոսի լեռնաշղթաներում գլխաւորապէս ապրում են մահմեդական մասսաներ, որոնք անուսով և բռնութեան տակ մահմեդականներ են և միայն օսմանեան վիճակագրութեան մէջ արձանագրուած իբր թիւրքեր, մինչդեռ նրանք խլամ են այն չափով, ինչ չափով որ քրիստոնէայ, ահա դրանց երբէք չի կարելի խլամ ճանաչել, առաւելն ևս՝ թիւրքեր. աւելի շուտ դրանք "մահմեդական" Հայեր են՝ որ վաղ թէ ուշ ազգային գիտակցութեան կգան, — իսկ դրա համար անհրաժեշտ պայման է խղճի, մտքի, օտքի, ճամուլի ազատութիւն, — մի իրաւունք, որ չը տուէ՝ ո՛չ բռնապետական, ո՛չ էլ "սահմանադրական" թիւրքերին:

Թողնենք մի կողմ հարիւրաւոր իրարու թշնամի ցեղերից բազկացած քրդերը, որ ազգ (nation) չենք կարող ճանաչել՝ բաւիս գիտական ըմբռնումով. կողմուտի և սպանութեան սիրահար, հեշտակեաց կեանքի վարժուած, աւարաւութիւնը արհեստ դարձրած, թալանը նպատակ ունեցող մի ժողովուրդ լաւ ապագայ չի խոստանում ամենևին: Իսկ տնտեսական կուլտուրական՝ արտադրող, ստեղծագործող աշխատանքի տեսակետից աւելորդ է Հայութիւնը համեմատել թիւրքերին կամ քրդերին: Ձմուռանք նաև որ Ինքնավար Հայաստանը պիտի դառնայ աւետեաց երկիրը, դէպի ուր քարաւաններով պիտի դիմեն աշխարհի չորս կողմերը սիրուած տարազիր Հայերի մեծամասնութիւնը: Արդ, թէև թիւրքիայի Հայկական նահանգներում Հայերը՝ շնորհիւ թիւրքիայի Հայաջինջ քաղա-

քականութեան՝ այսօր կազմում են միայն յարաբերական մեծամասնութիւն ու գտնոււմ են նիթական աննախամեծի վիճակի մէջ, սակայն բոլոր տուեանները ու վատտերը վկայում են՝ որ Հայ ժողովրդի քանակի թէ որակի տեսակետից, տնտեսական, կուլտուրական տիրապետութիւնը, գերակշռող նշանակութիւնը, քաղաքական ազդեցութիւնը ապահովուած է՝ թէ միայն Հայաստանում ստեղծուի այնպիսի լէժիմ, որը ազդակ լինի երկրի տնտեսական զարգացման, կուլտուրական աշխատանքի յառաջադիմութեան և ազատութեան: Իսկ այդ լէժիմը կարող է լինել միայն և միմիայն Հայկական Ինքնավարութիւնը Հայաստանում: Եւ Հայաստանի Ինքնավարութիւնը յառաջադրած նպատակին կարող է ծառայել միայն այն ժամանակ, երբ նա կունենայ իրերի զարգացման կանոնաւոր ընթացք՝ որի համար և անհրաժեշտ պայման է կա՛մ եւրոպական վերահսկողութիւնը, կա՛մ նրանց ներկայացուցիչը երդը մէկի, կա՛մ մի քանիսի, — այդ իրաւունքը ամենից աւելի պատկանում է Ռուսաստանին, որի թևարկութիւնը երբէք չի հակասում Հայ ազգային քաղաքական շահերին: — Ռուսաստանի Հովանաւորութիւնը, ի հարկին, անակնկալների դէպքում, արտակարգ և շուտափոյթ օգնութեան կարող է հասնել: Աւելացնելու է այս ամենի վրայ նա՛ն այն՝ որ Ռուսաստանը աւելի քան Անգլիան ու Ֆրանսիան, որոնք մահմեդական Հպատակներ ունեն, շահագրգռուած է թէ ներքին պետական և թէ արտաքին քաղաքական շահերի տեսակետից իր զանալիցը ունենալ համխաւածութեան դէմ՝ որը վաղ թէ ուշ Ասիայում ցնցումներ պիտի յառաջացնի: — որպիսի պատճառներից հարկադրուած կամայ թէ ակամայ Ռուսիան պիտի Հայ ժողովրդի քաղաքական շահերը պաշտպանէ: Հայաստանի Ինքնավարութեան գաղափարը՝ որին արդէն համամիտ է Երրեսկ Համաձայնութիւնը, պիտի վերագրել ի թիւս այլոց և՛ այն Հանգամանքին որ Հայաստանը այդպիսով բաժանում է Պարսկաստանն ու Փոքր-Ասիան իրարուց ու այդպիսով նրանց երազած միութեան գաղափարը սպանում՝ ինչոր ցանկալի է նաև Ռուսաստանին, որը իր ամենակենսական շահերի պատճառաւ բնաւ չի հանդուրժել համխաւածական գաղափարի զարգացման և ամէն կերպ պիտի աշխատի թիւրք ազգայնականների խանդարուած մտայնութեան այդ խոկապէս թունաւոր, մահաբոցը արիւննաձարաւ մտքերը մեռցնելու չարաչար կերպով:

Միջազգային յարաբերութեանց ներկայ ժամանակաշրջանում մենք Հայերս՝ մեր ներքին կեանքի մէջ՝ մեր փրկութիւնը ամենից առաջ մեր ոյժի ու կարողութեան մէջ տեսնելով, մեր արգար դատի իրաւունքի յողթանակը Հէ՛նց մեր մտաւոր, ֆիզիքական, բարոյական ընդունակութիւնների մէջ որոնելով, մեր կազմակերպուած զանգուածները մոլեգնած թշնամու արշաւանքի դէմ վահան դարձնելու աշխատանքը ի գործ պիտի դնենք, — թուրք ազգայնական այն թշնամու, որ ուղում է մեզ զարգացման, բարգաւաճման միջոց չտալ, մեզ կլանել, մեզ սպաննել:

Այս պայմանների ներքոյ, նախ պիտի խօսի Հայ ժողովրդի կաճքը. ամէն բանից առաջ նա իր յոյսը իրեն վրայ պիտի դնի: — Կենսունակները՝ միայն արժանի են ազատութեան, քաջերը կարող են ապրելու իրաւունք ունենալ, — այսպէս է գրուած ժամանակալից բուրժուազական, քաղաքագիտական, բարոյագիտական օրէնսգրքում: —

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՒՐՈՂԱԿԱՆ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ներկայ աշուճ րոպէին, երբ Պալքանեան Դաշնակիցներու խիզախ, հերոսական ժէպերու և աննման քաջագործութեանց շնորհիւ կը կտարախ Եւրոպական Թիւրքիոյ թողման արաբողութիւնը, և երբ ճարդիւնն ազատութեան գաղափարին պաշտպան քաղաքակիրթ ազգութիւնները կողջունեն թրքական լուծի տակէն ազատագրող թշուառ ժողովուրդներու վերածնունդը, այսպիսի պատմական րոպէին, կրսնք, եթէ կայ ճէկը, որ իր ձեռնածութիւններով ընդհանուր զգանքի և ճողմանքի աւարկայ դարձած է, դա՛ ոչ թէ վարչական և զինուորական սնանկութիւն յայտարարած և գերեզման իջնող Թիւրքիան է, այլ, անոր գործած նախնիներուն, թափած անմեղ արեան գլխաւոր զրդիչը և պատասխանատուն համարուող "Եւրոպական Ներդաշնակութիւն"ն է, որ ճի քանի առիւթներէ ի վեր կը պարէ աւտորիական սրինգով և իր նուրայցած ատամներու արանքէն պառաւական սպառնալիքներ կը տեղացնէ Պալքանեան Դաշնակցութեան այս կամ այն անդամին դէմ՝ յանուն ձեռեւ-ձեռած "Ինքնավար Ազատիոյ" հողային ամբողջականութեան, որուն ճէկ անբաժան ճառք պէտք է կազմէ Շքոտրան, երրորդը՝ թրքական ա՛յն անառիկ կարծրած բերդերէն, որոնցմէ երկուքը՝ Յանինան և Արիանու պոլիսը, "հերոսական" զիմացութեան ճը վերջը, որպէս թղթ գրեական, ինկան յոյներու և պուլխարներու գործած զիւցալնական յարձակումներու հարւածին տակ:

Աւտուռ-ձուռգարին, Եւրոպայի այդ երկրորդ "հիւանդ ճարդ"ը, Պալքանեան Դաշնակցութեան տարած անսպասելի յաղթանակներու շնորհիւ իր ներքին և արտաքին ակնկալութեանց ի դերս ելնելէն խելակորոյս՝ ամէն կարգի խարդաւանանքներ կը գործածէ նորանոր բարդութիւններ առաջացնելով ջուրը սղաորելու, որպէսզի կարողանայ իր ճուր հաշիւները կարգադրել: Ահա թէ ինչո՛ւ ամիսներէ ի վեր զէնքի տակ կը պահէ հարիւր հազարաւոր զօրք՝ քայքայելով երկրի անտեսական կեանքը և թշուառացնելով հազարաւոր ընտանիքներ: Ահա թէ ինչո՛ւ "վերաբուժն կորսնցնելէ յետոյ ճէկ կոճակի համար" կուզէ յառաջ բերել Եւրոպական ընդհանուր բոցաւառում:

Պալքանեան Դաշնակիցները, սակայն, առանց ճեճ կարևորութիւն ընձայելու "Եւրոպական Ներդաշնակութեան" ունայն սպառնալիքներուն, սխառեմաղիքօրէն կը գործադրեն իրենց ռազմական ճրագրերը՝ ճիշտ "կատարած իրողութեան" առջև դնելով Եւրոպական վեց ճեճ, հղօ՛ր և ամենակարօ՛ղ պետութեանները, որոնք խիստպէս "վեց ճեճ անկարողներ" են շնորհիւ իրենց աններդաշնակութեան, իրարու հանդէպ սնուցած ատելութեան և շահերու հակամարտութեան: Մեճ Մարդասպանը երկար տարիներ խաղաց "Եւրոպական Ներդաշնակութեան" աններդաշնակ լարերուն վրայ, այժմ Պալքանեան Դաշնակիցներն են, որ կողուին այդ լարերէն: Եւ ահա, երբ վարագործը կը պատրաստէր իջնել Պալքանեան Դարձայի վրայ, ականատես կըլլանք ճի վերին աստիճան դա-

ւեշտական վտարվիլի, որու վեց ճեճ դերակատարները, պատերազմի առաջին օրերուն "չէրքութիւն" և "հողային անշահակնորութիւն" յայտարարելէ յետոյ՝ այսօր կուզեն նաւային ցոյցով ճը "ահարեկել" Եւրոպայի ամենափոքրիկ թագաւորութիւնը: Վտարվիլի դերակատարները կը հրաճային նիկոլաթագաւորին՝ անձիջապէս հեռանալ Շքոտրայէն: Նիկոլան կը պատասխանէ "ո՛չ կարիճք"ով:

Վեց պետութիւնները կը համարձակվին արդեօք սուլամահութեան դատապարտել արդէն աղքատիկ Մօնթէնէկրօն՝ պաշարելով անոր փոքրիկ նաւահանգիստը եղող Անթիվարին: Դատելով այդ "ներդաշնակութեան" գործունէութեան եղանակէն, կարելի է ենթադրել, որ՝ ո՛չ, բան ճը, որ ճիջազգային օրէնքներու (droit des gens) դէճ է, որու "պաշտպան"ը կը ներկայացնեն ինքզինքնին այդ "ճեճ" պետութիւնները:

Բայց եթէ, հակառակ բոլոր ակնկալութեանց, այդ "ճեճ" երբ առաջնորդելով այն տեսակէտէն թէ՛ Լօնտօնի Դեպարտալարհրդի ճէկ որոշման դէճ փոքրիկ Մօնթէնէկրօյի անսաստելը և անպատիժ թողելը գերօյի պիտի հաւասարեցնէ իրենց հեղինակութիւնը, որով Արեւելեան բարդ հարցի լուծման ճիջոցին պիտի բազմին անվերջ խոջնդոտներու, ու ամէն գնով կազմակերպեն "Միջազգային" նաւային ցոյցը, կը վերականգնի "Եւրոպական Ներդաշնակութեան" արդէն ինկած վարիը, ո և է ազդեցութիւն կունենա՛յ՝ այդպիսի երկու չափ և երկու կշիռ գործածող "ներդաշնակութեան" ցոյցը Մօնթէնէկրօյի կամ իր Դաշնակիցներու վրայ:

Դաժուրներու, Մաճճինիներու և Կարիպալարիներու շունչովը ապրող Խալիան, Փրանսական Մեճ Յեղափոխութեան ճնունը եղող Հանրապետութիւնը և կամ Կլատթօններու ողիով սնուող ազատական Անգլիան կը դաւաճանեն արդեօք իրենց պատմութիւնը, իրենց աւանդութիւնները՝ ռքակոճելով ճարդիւնն ազատութեան համար գեաանճան արիւն հոսեցնող Մօնթէնէկրօյի հալա՛րտ լեռները:

Եւրոպական Պետութեանց հեղինակութիւնը ինկաւ այն օրը, երբ իրենց իսկ ձեռքերովը ստորագրած Պերլինի Դաշնագրութեան 61-րդ և 23-րդ յօդաճներու գորճազրութեան համար խօսքերու սահճանէն անդին չանցան:

Այդ "ներդաշնակութիւն"ը ճէ՛ր, որ "սպառնալիքներ" կարգաց, իր ժամանակին, Սուլթան Հաճիտի գլխին՝ հայկական ինդրոյն կարգադրութեան համար: Մեճ Դահճապետը, որպէս պատասխան, հարիւր հազարներու արիւնը սրբակեց այդ "ներդաշնակութեան" երեսին, որը իր "հեղինակութեան" դէճ ճհամարեց բնաւ այդ շառաչալից սպրտակը:

Նա ճէ՛ր, որ հակառակեցաւ կրէտացի պատգամաւորներու Աթէնքի պարլամենտի ճէջ ընդունելուն և արգիլեց յոյներուն Կրէտէին դղչելը: Այսօր պատգամաւորները բաղճած են պարլամենտին ճէջ և Կրէտէն ալ ճիացած Յունաստանին:

Նա ճէ՛ր, որ ներկայ պատերազմի նախօրեակին, գոյալիւճակի (statu-quo) պաշտպան յայտարարեց ինքզինք և երգւեց թիզ ճը հող չտալ, ո՛ր կողմն ալ որ յաղթող հանդիսանար: Քրքք-Քիլիսէի ճակատաճարտին յաջորդ օրն իսկ թաղւեցաւ գոյալիւճակը և այսօր կը սակարկեն յաղթական կողմի ստանալիք երկրաճատերու ճասին:

Նա ճէ՛ր, որ իր Յունաւար 17-ի ճանուցագրով կը պահանջէր Բ՝ Դունէն՝ ընդունել իր առաջարկած հաշտութեան պայճանները և կամ սյրկս յոյս չգնել իր նիւթական և բա-

րոյական աջակցութեան վրայ ժէժնութիւնները պատասխանեցին Քեանիլ փաշայի գահլիճը տապալելով և Նազըմ փաշան ամարդիօրէն խողովակով: Այսօր նոյն "Ներդաշնակութիւն" ը չէ, որ կը սղծէ Նազըմի ճարգասպաններուն արիւնտոռ ձեռքերը, այն ատեն ճաքէն իսկ անցուցած չըլլալով թիւրքիոյ դէմ նաւային ցոյցի ճը կազմակերպութիւնը՝ իր հեղիւնակութեան բարձր պահպանման նկատումներով:

Նա չէ՛ր, որ դեռ երէկ, բռնի ոյժի գործադրութեան սպառնալիքով, անգլիական պարլամենտի ամպլիօնէն կը հրաձայէր Պալլանտան Դաշնակիցներուն, որ անմիջապէս ընդունին Եւրոպայի պայմանները: Դաշնակիցները Պառուսի բացառնչութիւններուն պատասխանեցին Ադրիանուպոլսոյ գրաւումով և Հաշտութեան աւելի խիստ պայմաններու նոր առաջարկով, զոր շնորհալիօրէն ընդունեց Լօնտօնի Դեպարտամետրոպոլիտը՝ "կատարած իրողութեան առաջ կը գտնուինք" պատճառաբանութեամբ:

Եւ ճինչ "Եւրոպական Ներդաշնակութեան" փեմաշտէք անգամները կը վիճաբանին և նորանոր նախագծեր կը ճշակեն, հակառաջարկներ կը բերեն, անդին՝ ձօնթէնէկրօցիներու թնդանօթները կը վերսկսին ուճակովեկ Շքոտրան, թըրքական ամբողջեանց վերջին մնացորդը, որու ճօտարուտ անկումէն վերջը, Պառու Եւրոպան, իր թափթիփած ատամներու ձեջէն վերջին քրթմնջիւն ճը արձակելով՝ դարձեալ շնորհալիօրէն ձեջք պիտի ծուէ "կատարած իրողութեան" առաջ:

"Եւրոպական Ներդաշնակութեան" խաղացած այս վօտը վիլէն խրատական ձե՛ծ դասեր կրնայ ստանալ Հայ ժողովուրդը, եթէ ազատագրական տենջը տակաւին կը լափէ անոր ներսի աշխարհը:

30 Մարտ 1913

Բ. Վ.

ԵՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

ԵՒ

Ս.-Պ. ՆՁՐԱԿԵՐՆ ԿՈՒՍԵՆՍՈՒԹԵՐՆ «ԿՈՉ»Ր

(Gazette de Lausanne-ի Մարտ 7 թիւէն)

Մօտակայ Արևելքի գէպքերը Եւրոպական Պետութեանց խորհրդածութեանց գլխաւոր առարկան դարձուցին՝ Փոքր Ասիոյ և Օսմանեան Կայսրութեան վերակազմութեան հետ կապ ունեցող բոլոր խնդիրները:

Այդ խնդիրներէն ա՛նկէն ծանրակշիւր և ամենատիպազական լուծման կարօտ եղողը Հայկական Խողիւրն է: Չնայած՝ որ 1894-1895-ի ձե՛ծ կոտորածներէն ի վեր քսան տարիներ անցած են, Հայկական Նահանգներու դրութիւնը փոխուած չէ երբէք: Միևնոյն հարստահարութիւնները, միևնոյն անարդարութիւնները և միևնոյն տառապանքները կը շարունակին այս դժբախտ երկրին ձեջ, որձէ՛ Եւրոպան թէև պահ ճը յուզեցաւ, բայց շատ շուտով ձեռնթափ եղաւ:

1895-ին, Կ. Պօլսոյ Անգլիական, Ֆրանսական և Ռուսական դեսպանները Բ. Դրան ներկայացուցին Բարենորոգումներու Մրազիր ճը, որ կարող էր, արդարև, խաղաղութիւնը վերահաստատել Հայաստանի ձեջ, այլ սակայն, որպէս ճրագիր ալ մնաց: Այսօր Հայ քաղաքական կուսակցութեանց

ա՛նկէն զօրաւորներէն ձեկը — Հնչակեան Կուսակցութիւնը, կուգայ, իր կարգին, Եւրոպայի ուշադրութեանը ներկայացնելու Բարենորոգումներու նոր Մրազիր ճը, որ ձե՛ծ ճասաճը կը բղխի 1895-ի Մրազրէն, բայց, որը սակայն, շատ ճը կէտերու ձեջ, կը տարբերի անկէ, որովհետև պարագաները ճասաճը կերպարանափոխեցին խնդիրը, և ներկայիս, Օսմանեան Կայսրութեան ձեջ ապրող ազգութիւնները իրենց ապահովութեան և զարգացման համար պէտք տնին ա՛լ աւելի զօրաւոր երաշխաւորութիւններու, որքան որ ինքը՝ Կայսրութիւնը աւելի տկարացած, աւելի քայքայուած կը թուի:

Հայաստանը բաժնուած է եօթը կուսակալութիւններու, որոնք են Սեբաստիա, Տրապիզոն, Վան, Տրպիանակերտ, Բաղէշ, Մամուրէթ-իւլ Աղիզ և Կարին: Այս հոլայն բաժանումը եղած է Հայ ժողովուրդը ամենուրեք փոքրամասնութիւն ներկայացնելու կանխամտածութեամբ, այնպիսի ձևի տակ, որ Հայը իր սեփական երկրին ձեջ նկատուած է որպէս օտարական ճը, որպէս երկրորդական տարր ճը, որ պարտաւոր էր նսեմանալ թւական գերակշռութիւն ներկայացնող միւլիման տարրի առաջ:

Սա առաջին և հիմնական անորոգարութիւնն է: Տաճկահայաստանը, որ 200,000 քառակուսի քիլօմէթր տարածութիւն ունի, պէտք է կազմուած ըլլայ համայեղ և խիտ տարրերէ բանուոր սահմանագծուճով ճը, հիմնուճ՝ ոչ թէ քաղաքական պատեհութիւններու, այլ ազգագրական նկատումներու վրայ: Ասիկա կը կազմէ հիմունքը բոլոր միւլ պահանջներուն, որովհետև Հայաստանը չի կրնար ապրիլ և ինքզինքը կառավարել մինչև այն օրը, երբ թիւրքիոյ 1,200,000 հայերը կուսակալութեանց սահմաններու վրայ ամփոփուած 3,000,000 ճահճետականներու կողմէն ջնջելու վտանգէն գերճ չըլլան: 1) Եւ սակայն, ճահճետական և հայկական կուսակալութիւնները կրնան դրացիանալ առանց ո և է անպատեհութեան, վտանգը գոյութիւն ունի երկու հակառակ կրօնքներու և ցեղերու վարչական ձուլումին ձեջ:

Հայաստանը իր աշխարհագրական ճշգրիտ կազմութիւնը վերստանալէ ցետոյ տակաւին պէտք պիտի ունենայ քաղաքական որոշ ազատութեան ճը: Այս ազատութիւնը պիտի ստանայ նա պարզապէս գործադրութեամբը 1863-ի Խաթիբ Հիւճայունի, որով հայերուն զանազան առանճնաշնորհումներ կը տուէր և որը կը պարփակէր իր ձեջ լուրջ և արդիւնաւէտ ինքնավարութեան ճը սաղճը: Արդէն գոյութիւն ունեցող քաղաքապետական ինքնավարութեան վրայ բաւական է աւելացնել վիլայէթներու ինքնավարութիւնը և միշարք երաշխաւորութիւններ, օրինակ՝ ազատութիւն ճաճուլի, ազատութիւն գուճարումներու, ազատութիւն խղճի և ազատութիւն ընկերութիւններու:

Իսկ ինչ կը վերաբերի Հայաստանի կեդրոնական կառավարութեան կազմակերպութեան, ահա թէ ինչ ձևերու տակ կը բացատրէ իր պահանջները Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը. —

Այստեղ յօլաճաղիլը վիշելով «Կոչ»ի ձեջ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցած հինգ պահանջները կը յարէ. —

Այս նախագիճը բաւական ձե՛ծ նճանորոգութիւն ունի Օս-

1 Յարգելի յօլաճաղի բերած թւերը ճղութիւնէն տեռու են: Ետք.

ճանեան Կայսրութեան ճէջ արգէն գոյութիւն ունեցող ուրիշ ինքնավար կազմակերպութեանց, օրինակի համար Սաճոսի կամ Լիբանանի:

Հայկական խնդիրը իր իսկութեան ճէջ, ուրեմն, կենսական խնդիր ճ'է թէ՛ Թիւրքիոյ և թէ՛ Հայաստանի համար: Եթէ Թիւրքիա կուզէ ընդդիմադրել զինք հետզհետէ տարրալուծող անկազմակերպութեան ճգտուճին, նա չի կրնար թոյլ տալ, որ իր իսկ ճասերը կազմեն անկախ ճարճիները, թէկուզ իր գերիշխանութեան տակ: Աճեն պարագայի տակ ճէկ բան սորճ է, այդ այն է, որ Հայաստանը չի կրնար յուսալ ճեռք բերել իր ազատութիւնը, առանց ճեճ պետութեանց ճիշտաճտութեանը: Նա այդ ազատագրութիւնը պիտի չի պահանջէ Թիւրքիայէն, Այլ Եւրոպայէն:

Մնաց որ, ինքը Սուլթան Հաճիւն էր, որ Հայերուն ցոյց տուաւ եւրոպական դահլիճներուն ճամբան: Ինքն էր, որ ճղեց Վարճայեան Պատրիարքը զիճել Ռուսիոյ՝ Ս.Սթեֆանոսի բանակցութեանց ճիշտցին, որովհետև կը յուսար թէ՛ ճէկը ճիւսին վրայ պատաստելով Օսմանեան Կայսրութեան բոլոր ներքին խնդիրները, ճանոնք ալ աւելի անլուճելի կը դարճնէր: Ռւրեմն ինքն է, որ անուղղակի կերպով և յակամայիս ճնունդ տուաւ Ս.Սթեֆանոսի դաշնագրութեան 16-րդ յօդուճին, որը քիչ յետոյ փոխեցաւ Պէրլինի դաշնագրութեան 61-րդ յօդուճին: Այդ ճամանակէն սկսեալ Հայկական Խնճղիրը Եւրոպական Խնդրոյ ճնոյթ ստացաւ, Մակեդոնական և Կրետական Խնդիրներու նճան, և այսօր իսկ Եւրոպային կիցնայ անոր յուճճան պարտականութիւնը:

Բաց երբ Եւրոպան կը ճիշտաճէ այդպիսի խնդիրներու ճէջ ճիշտ Հաճիւնդրական դիտումներով է: Երբեուն Թիւրքիոյ ճուրջը կան այնքան ցանկութիւններ, այնքան աւելի կամ պակաս արտայայտեալ տենջանքներ, այնքան բաճանճան ճրագրեր, որ Օսմանեան ազգութիւններէն ս և է ճէկուն ազատագրութեան համար եղաճ փորճ ճը անխուսափելիօրէն պատրուակ ճը կը ճառայէ հզօր դրացիներու ճիշտաճտութեան: Թորաճագիրը ճճագրելէ յետոյ ուսս կառավարութեան վերաբերճունքը և անոր ճիտումները դէպի արևելք՝ Հայաստանի Ինքնավարութիւնը փաստելէ յետոյ կը վերջացնէ այսպէս — Եւրոպական պետութեանց կողմէն ճանաչաճ և երաշխաւորաճ ինքնավարութիւն ճը ճիւսին կրնայ թոյլատրել որ հայ ազգը ապրի թէև յաջողութիւնը իրականանալէ ճտտ հետուր թի սակայն այս ուղղութեաճ է որ պիտի գորճաճէ իր ոյճերը և իր կաճքը: Պէտք է յստատլանիլ, որ ճինչև ցարդ հայերու ունեցաճ անյաջողութեան պատճառը կը կայանայ իրենց ներքին պատակաբաններուն ճէջ: Հայ ճողովորդը դէպի ազատութիւն առաջնորդելու պատիւը պահանջող կուսակցութիւնները յաճախ, անիրաւացիօրէն, իրենք իրենց ճէջ պառակտաճ են, այն ճամանակ երբ աւելի սերտ ճիտութիւնը և աւելի խիտտ կարգապահութիւնը անհրաճեշտ էին Եւրոպայի ուշադրութիւնը և ճիշտաճտութիւնը անխուսափելի դարճնելու համար:

Կարելի է ենթադրել, որ անցեալի դասերը անօգուտ չպիտի անցաճ ըլլան: Այս բոպէին հայկական ճանաղան հատաճններու ճէջ աստիճանական ճերճեցում ճը կը նճճարւի, և այն օրը, որ այս ճերճեցումը պիտի յանգի տեսակէտներու և գորճելակերպի կատարեալ ճիտութեան ճը, ճեճ քայլ ճը առնաճ պիտի ըլլայ՝ դէպի Հայաստանի ազատագրութիւնը:

Charles Vellay

Express de Genève օրաթերթի Մարտ 27 թիւն ճէջ, խճագրական յօդաճով ճը կը պաշտպանի Ս.Շ Հնչակեան Կուս. Կեղր. Վարչութեան «Կոչ»ի դրաճ հիճունքները և «Ինքնավար Հայաստան»ի գաղափարը:

Միշտագային նճանակութիւն ունեցող Le Courrier Europeen-ի Մարտ 28 թիւն ճէջ, գրագիտուհի օր. Elias Altian գեղեցիկ յօդաճ ճը նւիրաճ է հայկական խնդրոյ և Հայաստանի ինքնավարութեան դատին:

Փարիզ հրատարակող La Vie շաբաթաթերթի № № 13 և 15-ին ճէջ գետղեաճ է ընկեր Բ. Վարաղատի յօդաճաշարքը՝ ուր կը վերլուճի «Հայկական Խնդիրը» սկզբէն ճինչև ճեր օրերը:

«ՀնճԱԿ»ը եի ԹՌԻՐԲ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Այդ սր ճեռքերն են, որ «ճ ե թ լ ու ճ» են և թոյլ չեն տալիս, որ «Հնչակ»ը Թիւրքիա ճանի: — Երաճնք, որ այդ երկրի ճէջ գողութեան, աւարառութեան, ճարգասպանութեան ըէճիճը օր ի ն ա կ ա ն դարճրին:

Ռ՞ր բանականութիւնն է թելաղրել «Հնչակ»ները «ճերճել», — Թիւրքիայի ճէջ անփոփոող ազգերի՛ ճահերը: Բաց այդ ազգերի, այդ ճողովորների, նոյն իսկ Թուրք, նրանց կողպատուող, ճահագորճուող, ճրկուաճ դասակարգերի իսկական ճահերը պաշտպանողը ճենք ենք եղաճ՝ սկզբից ի վեր: Արդարութիւնը, ճճճարութիւնն է, որ արատին, ոճիլին հարկ պիտի տայ:

Չը լինի թէ «Հնչակ»ները «ճ ե թ լ ու ճ» են, չեն ցանկանում որ երկիր ճանի, սրպէսպի իրենց ոճրագորճական արարքների ճայնը տառապող ճողովորների, արիւնքաճ հարատահարաղոնների ականջին չը հանի: — Ահա հէնց այդտեղ է, որ ճիշտաիճները ճարաչար սխալաճ են: Երկիրը կորճանող, թ ա լ ա ն չի կառավարութեան կոկորդը ճենք չենք, որ բաց պիտի թողնենք:

Այդպիսով են, ուրեմն, ցանկանում ճրկուաճ Քաղաքական Խնդիրները վճուել, երբ տարրական իրաւունքների խօսքն անգամ չեն թոյլ տալիս աղատօրէն հնչուելու՝ հրապարակապէս:

Այ՛ աճպարարներ, այ՛ լարախաղացներ, ճեր կաշին ճենք վաղուց ենք ճանաչում, իղուր ճի՛ ներկուեցէք:

Կեղրնական գանճարանի ճէջ ճնորհակալութեաճ ստացաճ են հետևեալ գումարները. —

Ս. Զաղաք Սիբիրեցիէն Ս.-ի ճնումք	—	500 ռպ.
Ստողէն	—	500 "
Մի Ռոս-էն	—	500 "
Լուսինէն	—	500 "
Սենսքերիւնէն	—	300 "
Նիկողայոսէն	—	150 "
Հաւատըն	—	100 "
Ասպետէն	—	50 "
ԳԱՀԻՐԻՆ Մ-ղէն	—	1300 Փր.
Ամերիկայի Գորճ. Յանճ.-էն	—	1000 "
ՓՌՉՆՅՅՈՅՆ Մ-ղէն	—	50 ալ.
Բագուէն Մ.-ի ճնում.	—	84 Փր.
Հանգանակաճ հետևեալ կերպով. —		
Մ. 10, 10, Ս. 3, Թ. 5, Մ. 3, Վ. 1 ռ.	Գմր. 32 ռպ.:	
ՆՆՂՈՆՑ Մղ-էն Ս. Ս.-ի ճնում.	—	960 ռրճ
ՅԱՄԱՔԱԿՂՁՆ	—	540 "
ԱՌԻՐԾ	—	540 "
ԺՈՎԱԾՈՑ	—	540 "
ԲԱՐՁՐԱՎԱՆԻԱԿ Ռ. Ա.-ի ճնում.	—	73 "
Կ. Պօլխ ընկեր Թ. Ս.-էն	—	216 "
Ամերիկայի մ-իւղերու ճանճարաններու մշջ ստացաճ գումար ներու ցուցակը յաջող թիւով:		

Իրաւ, մանղաս եւ այլն ուղարկել հետևեալ հասղեով. — M. BELLART 227, Boulevard Raspail. Paris (France)

Gérante : ANNA DARIUS Imp. TURABIAN, 227, Boulevard Raspail, Paris.